Azg
armenian daily
3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002 ԵՐԵՔՇԱԲԹԻ 221(2666)

Բժիշկները մոսկվացիներին խորհուրդ են տալիս տանը մնալ

ՄՈՍԿՎԱ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Մոսկվայում grsahարությունից տուժել է 58 մարդ, որոնցից երկուսը վախճանվել են մինչեւ «շտաղ օգնության» ժամանելը: Այս մասին երկուշաբթի հայտնել են մայրաքաղաքի Շտաղ օգնության ծառայությունում, հաղորդում է «Նովոստի» գործակալությունը: «Շտաղ օգնությունում» նշել են, որ 20 աստիճան սառնամանիքը շատ ուժեղ չի ազդել grsից տուժածների թվի մեծացման վրա: Անցած օրվա ընթացքում «շտաղ օգնության» բրիգադները մեկնել են 6100 անգամ: Դա չի տարբերվում սովորական օրերի ցուցանիշից: Բժիշկները նախկինի պես խորհուրդ են տալիս ձեռնոցի մնալ փողոց դուրս գալուց ստի անբավարարություն եւ թույլ առողջություն ունեցող մարդկանց:

ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ պե՞տք է դիմակայի սպառնալիքներին

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանում Ինտերֆաքսի սեփ. թղթակից

ՖՈՏՈԼՈՒՐ

ՆԱՏՕ-ում Հայաստանի ներկայացուցիչ Վիգեն Չիթեչյանը գտնում է, որ «Հայաստանը պետք է ուշադիր լինի անվտանգության համակարգում տեղի ունեցող բոլոր փոփոխություններին եւ մասնակցի Եվրասլանտյան խորհրդի կառուցմանը, այլապես կմեկուսացվի արտաքին աշխարհից»: Երեւանում նոյեմբերի 29-ին երկրի ԱԳՆ կենտրոնական աparատի հետ Հայաստանի արտաքին դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հանդիպման ավարտից հետո Ինտերֆաքսի թղթակցի հետ զրուցելիս հայ դիվանագետը նշեց, որ «ՆԱՏՕ-ի վերջին ընդլայնումը վկայում է, որ ՆԱՏՕ-ի խնդիրը ոչ միայն աշխարհագրական ընդլայնումն է, այլեւ նոր առաքելությունների կատարումը՝ դիմակայումը ՆԱՏՕ-ի երկրների սահմաններից դուրս ծագած սպառնալիքներին»:

Նրա խոսքերով, «Հայաստանը չի կարող անտեսել աշխարհում առկա բոլոր փոփոխությունները»: Դրա հետ մեկտեղ Վ. Չիթեչյանը նշեց, որ «այսօր ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցության խնդիր չի դրվում. նոպատակն է այնպես անել, որ ՆԱՏՕ-ի հետ համատեղ նա մասնակցի նոր սպառնալիքների դեմ մղվող պայքարին»: «Քանի որ բոլոր երկրները հայտարարել են, թե հակաահաբեկչական պայքարը բովանդակ աշխարհի խնդիրն է, ապա Հայաստանը եւս պետք է մյուսների հետ համատեղ պայքարի այդ չարիքի դեմ», ավելացրեց նա:

Տես էջ 2

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԳՈՏԻ

Անակնկալ այց Բաղդադի Ալ Քարամա ռազմական համալիր

ՄԱԿ-ի տեսուչները երեկ անակնկալ այցելեցին Բաղդադի մոտ գտնվող Ալ Քարամա ռազմական համալիր, որտեղ տեղադրված են Իրաքի հրթիռային սպառազինությունները: Անգլիական կողմի պնդմամբ, Իրաքն իր տրամադրության տակ դեռեւս ունի առնվազն 20 միավոր «Սկուտ» տեսակի հեռահար հրթիռներ, որոնք արգելված են Ծոցի պատերազմից Բաղդադին պարտադրված պատժամիջոցների ցուցակով: Իրաքն այդ տիպի հրթիռներ օգտագործել էր այդ պատերազմում Իսրայելի եւ Քուվեյթի դեմ: Անգլիացիների պնդմամբ, նման հրթիռներով Իրաքը կարող է հարվածել, օրինակ, Կիպրոսում տեղադրված բրիտանական ռազմակայանները:

Երեկվա ստուգումներից որեւէ բան չպարզվեց: Միայն տեսուչներն ասացին, որ համալիրում մի շարք հրթիռային կոմպոնենտներ պակասում են:

Տեսուչների մի այլ խումբ օրվա ընթացքում այցելեց Բաղդադի հյուսիսում գտնվող Բաքուբա դեղագործարանը, որտեղ ծաղիկներից բուժիչ օշարակներ են արտադրում: Այստեղ էլ ոչինչ չբացահայտվեց:

Այսուհանդերձ, Մեծ Բրիտանիայի կառավարությունը երեկ մեկ այլ թղթածրար հրապարակեց, որտեղ օրինակներով խոսվում է երկրում նախագահ Սադդամ Հուսեյնի կիրառած ճնշիչ մեթոդների՝ բանտերում եւ հարցաքննության վայրերում մարդկանց կյանքերի ու տանջանքների մասին: Այս քայլն, ըստ երեւույթին, նպատակ ունի քարոզչական ճնշման միջոցով Իրաքի ղեկավարությանը ջղային վիճակի մատնել եւ սխալների մղել:

Համիդ Կարզայն օգնություն է խնդրում դոնոր երկրներից

Երեկ Բոննում (Գերմանիա) տեղի ունեցավ դոնոր երկրների խորհրդաժողովը՝ Աֆղանստանի ղեկավար Համիդ Կարզայի մասնակցությամբ: Վերջինս հավելյալ օգնություն խնդրեց մասնակից երկրներից՝ երկրում անվտանգությունը վերջնականապես հաստատելու եւ տնտեսական զարգացում ապահովելու համար: Կարզայը հույս հայտնեց, որ մինչեւ իր ժամանակավոր իշխանության ավարտն Աֆղանստանը կօժտվի սահմանադրությամբ, որին կհաջորդեն տեղական, խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ: Խորհրդաժողովում Գերմանիայի արտգործնախարար Յոշկա Ֆիշերի ելույթը համահունչ էր Կարզայի կոչին: Ֆիշերը մասնավորապես նշեց, որ Աֆղանստանում դեռեւս շարունակվում են ներքին զինյալ հակամարտությունները մրցակից ցեղերի եւ խմբավորումների միջեւ, եւ չպետք է թույլ տալ, որ երկիրը կրկին վերադառնա քաղաքացիական պատերազմի ժամանակներին:

Հիշեցնենք, որ Գերմանիան մինչեւ առաջիկա տարվա սկիզբը դառնալու է Աֆղանստանի հոգատար երկրների խորհրդի նախագահողը:

Երեւանի փողոցների վերանորոգումը կավարտվի դեկտեմբերի 28-ին

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: «Լինսի» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող Երեւանի փողոցների ասֆալտապատումը կավարտվի դեկտեմբերի 10-ին. ներկայիս դրությամբ աշխատանքներ են ընթանում միայն Մոսկովյան փողոցի Բաղրամյան պողոտային հարող եւ Նալբանդյան փողոցի Սախարովի եւ Հանրապետության հրապարակները միացնող հատվածներում:

Ըստ «Լինսի» հիմնադրամի «Ճանապարհաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակի ղեկավար Էդուարդ Բեզոյանի, մինչ դեկտեմբերի 28-ը ծրագրի շրջանակներում կիրականացվեն մայթերի սալիկապատման, եզրաքարերի տեղադրման, ինչպես նաեւ արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ: Նշվեց նաեւ, որ արդեն լուսավորվել են մայրաքաղաքի կենտրոնական փողոցներից 5-ը, այդ թվում Խանջյան եւ Սմիրյան փողոցները:

ՖՈՏՈԼՈՒՐ

Բուդյոնովսկի (Սուրբ Խաչ) հիմնադիր հայերի հուշարձանի մրցույթ

ԿՐԱՍՆՈԴԱՐ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բուդյոնովսկ քաղաքի (Ստավրոպոլի երկրամաս) վարչակազմի նախաձեռնությամբ քաղաքի հիմնադիրների՝ հայ վերաբնակների, հուշարձանի լավագույն նախագծի մրցույթ է հայտարարված: Հայ վերաբնակները Պավել Առաջին կայսրի հրամանով հողեր են ստացել Կումա գետի ձախ ափին եւ հիմնադրել Սուրբ Խաչ քաղաքը, որը հետագայում վերանվանվել է Բուդյոնովսկ:

Ինչպես հաղորդել է Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը, հուշարձանի տեղադրման վայրն արդեն որոշված է: Այն կկանգնեցվի Բուդյոնովսկի հին մասում, որը հայտնի է Կարաբաղլա անունով: Հենց այստեղ են հիմնավորվել առաջին վերաբնակները: Առագա հուշարձանի նախագծի իրենց էսքիզներն են արդեն ներկայացրել քաղաքի ճարտարապետներն ու թանգարանը, ինչպես նաեւ տեղի հայկական համայնքը:

Պաշտպանության նախարարին ժամանակավորապես փոխարինելու է գեներալ-գնդապետ Միխայել Հարությունյանը

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նոյեմբերի 30-ին տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարարության կոլեգիայի նիստը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ զինված ուժերի սպառազինության, տեխնիկայի պահպանման ու շահագործման, զորքերի տեխնիկական ապահովման վիճակը, դրանց զարգացման ու կատարելագործման ուղիները: Հիմնական զեկույցով հանդես է եկել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յուրի Խալատուրովը:

ՀՀ ՊՆ լրատվության եւ քարոզչության վարչության հաղորդմամբ, կոլեգիայի նիստի ավարտին պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը հանդես է եկել հայտարարությամբ, որով տեղեկացրել է, որ մոտ ժամանակներս, ամենայն հավանականությամբ, անցնելու է երկարատեւ արձակուրդի եւ զբաղվելու է նախընտրական աշխատանքներով: Արձակուրդի ընթացքում Ս. Սարգսյանին փոխարինելու է զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միխայել Հարությունյանը: «Ցանկացած խախտում, որեւէ անլուրջ մոտեցում այդ ժամանակահատվածում պատժվելու է շատ ավելի խիստ: Անկախ բերացումների, խախտումների ժամկետներից՝ դրանք չպետք է պատճառաբանվեն ընտրությունների ընթացքով: Զինված ուժերից որեւէ մեկը չի ներգրավվելու ընտրարշավին, ընտրությունների ընթացքին: Բանակի մասնակցությունը ընտրություններին պետք է սահմանափակվի միայն զինծառայողների քաղաքացիական պարտքի կատարմամբ՝ քվեարկությամբ»,- նշել է պաշտպանության նախարարը:

ՎԵՃ

142 հազար դոլար վնասը կհատուցի «Արմենտելը»

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երեկ վերջապես հրապարակվեց նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության եւ «Արմենտելի» միջեւ կայացած բաց ժողովում քննարկված հարցերի վերաբերյալ եզրակացությունը: Խորհրդատվական այդ եզրակացությունը հրապարակեց ժողովի նախագահող, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահ Վարդան Մովսեսյանը:

Պրն Մովսեսյանը բաց ժողովի ներկայացուցիչներ՝ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի եւ «Արմենտելը» ներկայացնող գլխավոր տնօրեն Գեորգիոս Վասիլակիսի ներկայությամբ նշեց, որ եզրակացությունն արդեն նոյեմբերի 28-ին ուղարկվել էր կողմերին՝ առաջարկությունների ակնկալիքով, որոնց համար ժամկետ էր սահմանվել նոյեմբերի 30-ը:

Որպես այդպիսիք, առաջարկներ ստացվել են միայն ՀՀ կառավարությունից: Դրանց մի մասը մտել է նախնական եզրակացության մեջ:

Ըստ եզրակացության, բաց ժողովի քննարկման առարկան հանդիսացել է «Արմենտելին» տրված թիվ 60 լիցենզիայի պայմանների եւ դրույթների կանխամտածված, էական եւ պարբերաբար խախտման վերաբերյալ ՀՀ կառավարության ներկայացրած մեղադրանքը:

Տես էջ 2

Ընթացիկ

Երեկ ՀՀ մնեսական դատարանը բավարարեց «Նոյյան տաղան» ՍՊԸ-ի դիմումը, որով վիճարկվում էին հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի գործողությունները: Անվավեր ճանաչեց ՀՌԱՀ «Նոյյան տաղանի» դիմումն ու մրցութային փաստաթղթերը չընդունելու, դիմումի եւ մրցութային փաստաթղթերի թերությունների մասին «Նոյյան տաղանին» սահմանված կարգով չզգուշացնելու եւ համաձայնական նշումներով ստացական չտալու 2002 թ. նոյեմբերի 8-ի անգործությունը: Պարտավորեցրեց ՀՌԱՀ-ին հեռարձակվում: Դատարանը մերժեց միջնորդությունը, քանի որ ՀՌԱՀ գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին «Նոյյան տաղանի» դիմումը վերաբերում էր Երեւան քաղաքի բոլոր 5 կայուղիների հեռարձակման մրցույթին:

«Նոյյան տաղանի» ներկայացուցիչները նշեցին, թե ՀՌԱՀ-ն ընկերության մրցույթներին մասնակցելու դիմումը չի ընդունել այն պատճառաբանությամբ, թե կայուղին նշված չէ, մինչդեռ պարտավոր էին այն վերցնել եւ տալ ստացական դիմումում առկա թերությունների նշումով: ՀՌԱՀ շահերի պաշտպան Սուրեն Պետրոսյանի խոսքով, կայուղին չնշելը, ինչպես նաեւ ստիման տարածքի սխալ նշելը («Նոյյան տաղանի» առաջարկում նշված էր Երեւան եւ Արարատյան դաշտավայր, մինչդեռ մրցույթի հանված կայուղիները Երեւանի ստիման էին) պատճառ է դիմումը չվերցնելու, քանի որ այն կազմված չէ ըստ ՀՌԱՀ կողմից սահմանված դիմումի ձեւի: «Նոյյան տաղանն» ասում է, որ դիմումը կազմելիս ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքի 49-րդ հոդվածով են առաջնորդվել, որը ՀՌԱՀ պահանջները չի ներառում:

Երկար հարցերի միջոցով, տարբեր ձեւակերպումներով դատավոր Սաթենոսյանը փորձում էր պարզել, թե ինչ հիմքերով է ՀՌԱՀ-ը դիմումը ոչ լիարժեք համարել: Հարցի մեջ հստակություն մտավ, երբ խոսեց պատասխանող կողմի ներկայացուցիչ Անանիա Արզումանյանը: Նա նշեց, որ «Նոյյան տաղանի» ներկայացուցիչը դիմումը բերել էր դիմումների ընդունման վերջին օրը եւ վերջնաժամկետից կես ժամ առաջ միայն 15:30-ին: Բերել էր չկարված եւ չկնքված 1 օրինակով դիմում, մինչդեռ պարտավոր էր ներկայացնել կարված, կնքված եւ երկու օրինակից: «Նոյյան տաղանի» ներկայացուցիչ Արթուր Դարբինյանին տեղյակ է պահվել այս թերությունների մասին, որոնք նա կարճ ժամանակ անց ուղղել է, սակայն նրա վերադարձն արդեն 16:05-ին է եղել՝ ուշացած, ուստի արդեն չէր կարող նայվել հանձնաժողովի կողմից:

«Նոյյան տաղանի» հայցը բավարարվեց

սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից եռօրյա ժամկետում «Նոյյան տաղանի» կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հեռուստահաղորդումների հեռարձակման կոնկրետ հաճախականության նշումով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ընդունել դրանք: Դատարանը պարտավորեցրեց հանձնաժողովին հօգուտ «Նոյյան տաղանի» վճարել 8 հազար դրամ պետտուրք:

Ճիշտ ժամը 11-ին դատավարության նշանակված ժամին, դատավոր Սնաստի Սաթենոսյանը մտավ նիստերի դահլիճ, որտեղ ներկա էին մի քանի լրագրողներ եւ ԵԱՀԿ, Եվրախորհրդի ներկայացուցիչները: Կողմերը չէին ներկայացել: 15 րոպե ուշացումով ներկայացան պատասխանող կողմի ներկայացուցիչները եւ մի փոքր սպասելուց հետո սկսեցին ձեւակերպել դիմումն առանց ինքության թողնելու միջնորդությունը: Այն, սակայն, հանվեց, քանի որ 20 րոպե ուշացումով, բայց, այնուամենայնիվ, «Նոյյան տաղանի» ներկայացուցիչները ներկայացան սեփական հայցի ինքությանը:

Դատական նիստը սկսվեց «Նոյյան տաղանի» միջնորդությամբ, որով ընկերությունը խնդրում էր 5 հաճախականություններից 4-ի մրցույթն անցկացնելու արգելքը հանել, քանի որ համարում է, որ ոչնահարվում են առաջարկ ներկայացրած մյուս ընկերությունների շահերը: «Նոյյան տաղանը», փաստորեն, արդեն նշում է, թե կոնկրետ որ կայուղով է հետաքրքրված: Դա 58-րդ հաճախականությունն է, որով այժմ CNN-ն է վերա-

Պետրոսյանի խոսքով, կայուղին չնշելը, ինչպես նաեւ ստիման տարածքի սխալ նշելը («Նոյյան տաղանի» առաջարկում նշված էր Երեւան եւ Արարատյան դաշտավայր, մինչդեռ մրցույթի հանված կայուղիները Երեւանի ստիման էին) պատճառ է դիմումը չվերցնելու, քանի որ այն կազմված չէ ըստ ՀՌԱՀ կողմից սահմանված դիմումի ձեւի: «Նոյյան տաղանն» ասում է, որ դիմումը կազմելիս ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքի 49-րդ հոդվածով են առաջնորդվել, որը ՀՌԱՀ պահանջները չի ներառում:

Երկար հարցերի միջոցով, տարբեր ձեւակերպումներով դատավոր Սաթենոսյանը փորձում էր պարզել, թե ինչ հիմքերով է ՀՌԱՀ-ը դիմումը ոչ լիարժեք համարել: Հարցի մեջ հստակություն մտավ, երբ խոսեց պատասխանող կողմի ներկայացուցիչ Անանիա Արզումանյանը: Նա նշեց, որ «Նոյյան տաղանի» ներկայացուցիչը դիմումը բերել էր դիմումների ընդունման վերջին օրը եւ վերջնաժամկետից կես ժամ առաջ միայն 15:30-ին: Բերել էր չկարված եւ չկնքված 1 օրինակով դիմում, մինչդեռ պարտավոր էր ներկայացնել կարված, կնքված եւ երկու օրինակից: «Նոյյան տաղանի» ներկայացուցիչ Արթուր Դարբինյանին տեղյակ է պահվել այս թերությունների մասին, որոնք նա կարճ ժամանակ անց ուղղել է, սակայն նրա վերադարձն արդեն 16:05-ին է եղել՝ ուշացած, ուստի արդեն չէր կարող նայվել հանձնաժողովի կողմից:

«Նոյյան տաղանի» ներկայացուցիչ Տիգրան Հարությունյանի խոսքով, փաստերը խեղաթյուրված են ներկայացվել, իրենք դիմումը բերել են ժամը 14-ի սահմաններում: ՀՌԱՀ-ում «ՆՏ»-ի ներկայացուցչին ընդունել են սիրալիր եւ մասնանշել չկնքված, չկարված եւ 1 օրինակի հանգամանքը, ինչը «ՆՏ»-ն ուղղել է եւ ներկայացել ժամը 15-ի սահմաններում, սակայն փաստաթղթերն ընդունելու մերժում են ստացել:

Կողմերն էլ իրար ամոթանք տվեցին, թե սուտ խոսել չի կարելի:

Ինչեւէ, դատավճիռը հօգուտ «Նոյյան տաղանի» էր, եթե, իհարկե, այն 15-օրյա ժամկետով ՀՌԱՀ կողմից չբողոքարկվի:

Իսկ առայժմ՝ միշտ չէ, որ ՀՌԱՀ-ն է հաղթող, ինչպես անընդհատ փորձ է արվում ներկայացնել:

Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

142 հազար դոլար վնասը կհատուցի «Արմենտելը»

Սկիզբը էջ 1

Հաշվի առնելով «WFI consulting» ընկերության կողմից «Արմենտելում» ստուգումներ անցկացնելու հետ կապված, նաեւ այլ փաստեր՝ եզրակացությամբ նշվել է, որ WFI ընկերության ստուգումներին լիցենզավորված անձի («Արմենտելի») խոչընդոտելը համարվում է թիվ 60 լիցենզիայի խախտում, քանի որ ՀՀ կառավարությունը, WFI-ի անկարողության հետեւանքով զրկվել է լիցենզիայի դրույթների եւ պայմանների կատարումը համարժեքորեն գնահատելու, ինչպես նաեւ լիցենզիայի պայմաններով ու դրույթներով դեկավարվելու գործընթացը կարգավորելու հնարավորությունից:

Այս խախտումն, ըստ եզրակացության, կանխամտածված է, բայց պարբերական բնույթ չի կրում: Թիվ 60 լիցենզիայի խախտումը ՀՀ-ի համար առաջացրել է 142 հազար ԱՄՆ դոլարի չափով վնաս:

Եզրակացության մեջ նշված խախտումը, սակայն, չի կարող առաջացնել թիվ 60 լիցենզիայի սահմանված կարգով դադարեցում, ընդհատում կամ փոփոխություն, քանի որ լիցենզիան կարող է դադարեցվել, ընդհատվել կամ փոփոխության ենթարկվել, եթե միաժամանակ առկա են խախտման 2 հատկանիշներ՝ կանխամտածվածություն եւ պարբերականություն:

Եզրակացությունն ավարտվում է այնպես, որ լիցենզավորված անձը պարտավոր է վերացնել լիցենզիայի խախտումը եւ առաջարկել անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀ կառավարության կողմից «Արմենտելին» տրված թիվ 60 լիցենզիայով նախատեսված ստուգումներն ու գնահատումները պատշաճ անցկացնելու համար:

Եզրակացության ընթերցումից հետո կողմերը պատասխանեցին լրագրողների հարցերին: «Արմենտելը» ներկայացնող Գեորգիուս Վասիլակիսը մասնավորապես ասաց, որ բաց ժողովն արդար էր, իսկ եզրակացությունն անարդար չի համարում (վնասի փոխհատուցման մասով- Ա. Հ.), չնայած «Արմենտելն» առաջարկել է վճարել միայն առաջացած լրացուցիչ ծախսերը:

Պրն Վասիլակիսը նշեց նաեւ, որ «Արմենտելն» ընդունում է եզրակացության բոլոր կետերը:

Արդարադատության նախարարն էլ, ի պատասխան հարցի, ասաց, որ կառավարության գերագույն նպատակն է ունենալ ժամանակակից, որակյալ կապ՝ արդարացի գներով: Այնպես որ, կառավարությունը պատրաստվում է անցկացնել ստուգում, որից էլ կախված կլինեն հետագա քայլերը:

Խոսելով ինտերնետային կապի խնդիրների մասին՝ Գեորգիուս Վասիլակիսը երկար խոսեց ներդրումներ-ակնկալվող եկամուտներ-նորից ներդրումներ մեխանիզմի՝ այս կամ այն երկրում գործելու ժամանակային տարբերություններից, ըստ էության, միայն կարեւորելով ներդրումների դերը՝ առանց որոշակիության:

Ինչ վերաբերում է ինտերնետ կապի միջոցով հեռախոսակապի ծառայություն մատուցելուն, ապա, ըստ պրն Վասիլակիսի, դա անօրինական ծառայություն է:

Գեորգիուս Վասիլակիսը, անդրադառնալով Վ. Մագլարասի կողմից դիրքորոշմանը, նշեց, որ OTE-ի բաժնետոմսերը գտնվում են Նյու Յորքի եւ Լոնդոնի բորսաներում, եւ դրանց ընդհանուր վիճակի ու առաջընթացի վրա մեծ ազդեցություն ունեն կազմակերպության ներկայացուցչությունը Հայաստանում եւ այդ ներկայության արդյունքները: «Մեր նպատակն է ապացուցել, որ Հայաստանում ներդրումների ռիսկը փոքր է», նման միտք հայտնեց «Արմենտելի» ներկայացուցիչը:

Ներդրումային իր պարտավորությունները չկատարող «Արմենտելի» համար նման նպատակն առնվազն հետաքրքրական է:

Ի ՀԻՇԱՏԱԿ

«Ես հայոց հողի գույնն ունեմ»

«Լեոնիդ Ազգալդյանը պետհամալսարանի պատմության անբաժանելի մասն է», ասաց ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն արցախյան ազատամարտում զոհված հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ, որը տեղի ունեցավ նոյեմբերի 29-ին ԵՊՀ մեծ դահլիճում:

Միջոցառմանը ներկա էին Լեոնիդի զինակից ընկերները, մտերիմները, նրան ու նրա գործը ճանաչողները:

Ելույթ ունեցողները նշում էին արցախյան պատերազմում Լեոնիդի ունեցած մեծ ավանդի մասին: Արկադի Տեր-Թադեւոսյանը կամ, ինչպես ժողովուրդն է նրան կոչում՝ Կոմանդոսն ասաց, որ Լեոնիդն իրեն հասկացրել է, որ հրամանատարի համար ամենից թանկն իր զինվորներն են, որ նրանց հանդեպ պետք է ունենալ խիստ, բայց ոչ դաժան վերաբերմունք:

Հրամանատարի զոհվելուց հետո նրան փոխարինած Հովսեփ Հովսեփյանը հիշում է, որ կռվի դաշտում Լեոնիդը մոտը միշտ մի պայուսակ գիրք էր ունենում: Դրանք ռազմական գրքեր էին, որոնք նա անընդհատ կարդում ու ռազմարվեստ էր սովորեցնում զինվորներին:

Նրա զինվորներից Սարգիս Հացպանյանն էլ նշեց, որ Լեոնիդը միշտ ասում էր. «Մեզ պետք չեն ազգի համար մեռնող զինվորներ, այլ ազգի համար ապրող զինվորներ են պետք»:

Լեոնիդ Ազգալդյանի անվան հետ են կապված Մարտակերտի 27 գյուղերի եւ Քելբաջարի ազատագրումը: Նրա ամբողջ կյանքը հայրենանվիրումի ու հայրենիքին ծառայելու օրինակ է: Արտասահմանցի լրագրողի հարցին, թե ի՞նչ կուսակցության եք պատկանում, Լեոնիդը գետնից մի բուռ հող է վերցնում եւ ասում. «Ես հայոց հողի գույնն ունեմ»: Եվ պատահական չէ, որ նրա դագաղը տանում էին 6 տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ: Լեոնիդն իր զինվորներին դաստիարակում էր նժդեհյան այս խոսքերով. «Մեռիր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքդ»:

Միջոցառման ընթացքում երգեց Գեւորգ Դաբաղյանը, ինչպես նաեւ հնչեցին Կոմիտասի, Մոցարտի, Տիգրանյանի եւ այլոց ստեղծագործությունները: Իսկ միջոցառման ավարտին ցուցադրվեց Լեոնիդ Ազգալդյանի մասին պատմող տեսաֆիլմ:

ՄԵՐԻ ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ձերբակալվել է «Պլտինը»

ՀՀ ազգային անվտանգության նախարարության օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ս. թ. նոյեմբերի 28-ին ձերբակալվել է հանցավոր շրջանակներում «Պլտին» մականունով հայտնի Երեւան քաղաքի բնակիչ Արտաշես Հարությունյանը: Վերջինիս անձնական եւ տանը կատարված խուզարկությունների ժամանակ հայտնաբերվել եւ առգրավվել են 250 գրամ հերոին, 70 գրամ մարիխուանա տեսակի թմրանյութեր, փամփուշտներով լիցքավորված «Մակարով» ատրճանակ, որոշ քանակի զինամթերք, ներարկիչներ եւ թմրանյութ պատրաստելու սարքավորումներ: Արտաշես Հարությունյանի նկատմամբ հարուցված է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

ՀՀ ԱԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ պե՞տք է դիմակայի սպառնալիքներին

Սկիզբը էջ 1

ՆԱՏՕ-ում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը գտնում է, որ «Հայաստանն Ադրբեջանից ու Վրաստանից հետ չի մնում ՆԱՏՕ-ի հետ գործակցելու առումով»: Նա ավելացրեց, որ «Հայաստանը նրանց գուցե զիջում է այդ մասին արված հայտարարությունների փոքր թվով»: Դրա հետ մեկտեղ նա խոստովանեց, որ «Վրաստանը եւ Ադրբեջանը ձգտում են դառնալ ՆԱՏՕ-ի անդամներ, բայց թե որքանով դա նրանց կհաջողվի, ցույց կտա ժամանակը»: «Համենայն դեպս, ամեն երկիր ինքն է ընտրում իր քաղաքականությունը եւ անվտանգության համակարգը: Բացի դրանից, մի մոռացեք, որ ՆԱՏՕ-ն ներկայացնում է 19 երկիր, իսկ շուտով դրանց թիվը կհասնի 26-ի, որոնք պետք է նախ արտահայտվեն այդ առնչությամբ», ընդգծեց նա: Վ. Չիբեչյանը գտնում է, որ «Հայաստանն ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ անվտանգության ապահովման հարցերում պետք է պահպանի կոմպլեմենտարության սկզբունքը»: Նրա կարծիքով, «եթե ինչ-ինչ կազմակերպություններում Հայաստանը կարող է բարձրացնել իր անվտանգության ապահովման մակարդակը, ապա պետք է օգտվի դրանից»:

Ինտերֆաքսի այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի Հայաստանի դիրքորոշումն Իրաքում ռազմական գործողությունների ծավալման դեպքում, Վ. Չիբեչյանը պատասխանեց, որ «Հայաստանը ՄԱԿ-ի անդամ է եւ պետք է ենթարկվի այդ կազմակերպության բոլոր որոշումներին: Նախ սպասենք, թե Իրաքում ինչով կավարտվի տեսչական ստուգումը»:

Դրա հետ մեկտեղ Ռուսաստանում Հայաստանի դեսպան Արմեն Սմբատյանն Ինտերֆաքսի թղթակցի հետ զրուցելիս հայտարարեց, որ «Ռուսաստանը բնավ մտահոգված չէ վերջերս Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների ակտիվացումից, քանի որ մեր երկիրն ամուր կապեր ունի ռուսական պետության հետ»: «Ճիշտ է, ռուսական կողմը նման մտահոգություն ուներ 2-3 տարի առաջ, բայց քանի դեռ մենք Ռուսաստանի հետ ունենք կայուն պայմանագրեր, նա երբեք չի մտահոգվի այդ առնչությամբ», ավելացրեց նա: Նրա կարծիքով, «Հայաստանը պետք է ջիգմներ ունենա բոլոր երկրների, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի հետ, եւ դա չի նշանակում, թե մենք դեմ ենք Ռուսաստանի քաղաքականությանը»: Դեսպանի կարծիքով, «ՆԱՏՕ-ի հետ կապեր պետք է ունենան բոլոր երկրները, այդ թվում նաեւ Ռուսաստանը, որն ունի նման ջիգմներ»:

Ա. Սմբատյանի խոսքերով, «ՆԱՏՕ-ի հետ վարվող բանակցություններին Հայաստանի մասնակցությունը շատ դրական է եւ բնականոն է համարվում Ռուսաստանի կողմից, քանի որ ամեն ինչ արվում է պատշաճ սահմաններում»: «Ամեն դեպքում այսօրվա դրությամբ Հայաստանի ռազմավարական գործընկերն առաջին հերթին Ռուսաստանն է», հայտարարեց ռուսական պետությունում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. հակադարձ ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրենքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Հարցազրույց

Սուրադ Բոջոյանի դիրքերը խախտանում են

Դատարանն սկսել է իրեղեն ապացույցների հետազոտումը

Թուրքիայի օգտին լրտեսության մեջ մեղադրվող Սուրադ Բոջոյանի դատավարությունը հետաքրքրական փուլ է մտնում՝ սկսվել է իրեղեն ապացույցների հետազոտումը: Հիշեցնենք, որ Բոջոյանը թուրքագետ է, եղել է ՀՀ առաջին եւ գործող նախագահների անձնական թարգմանիչը:

Նախ մի կապույտ թղթի մասին, որը համարվում է, թերեւս, իրեղեն ապացույցներից ամենածանրակշիռը: Կապույտ թուղթը գտնվել է Բոջոյանի բնակարանում խուզարկության ժամանակ: Ամբաստանյալը կապույտ թղթի վրա, որը ստացել է Ստամբուլում, սեւ մատիտով գրել է թուրքական գաղտնի ծառայության ՄԻԹ-ի առաջադրանքները, որոնք պետք է ներկայացներ թուրքական կողմին: Գրված է եղել թուրքերեն, Բոջոյանի գրիչով: Պետական մեղադրողը կարդաց դրա թարգմանությունը: ՄԻԹ-ը հետաքրքրվել է Հայաստանի եւ Հունաստանի ռազմական համագործակցության, Հայաստանում զենքի գործարանների, Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված ռազմական տեխնիկայի, ԱՊՀ հակաօդային ուժերի կառուցվածքի, Հայաստանի ազգային անվտանգության կառուցվածքի, Սերժ Ջիլավյանի, Հայաստան-Իրան համագործակցության, ԼՂՀ-ում ՀՀ ռազմական ուժերի տեղակայված լինելու, Հորադիսի զորամիավորման, հայ-թուրքական սահմանին տեղակայված ռուսական չորս ուղեկալների, ջրամբարների, երկաթգծերի, կամուրջների, ռազմավարական նշանակության այլ օբյեկտների, Քանաքեռի ռուսական գնդի մասին տեղեկություններով, Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում կա՞ն Քրդական բանվորական կուսակցության (PKK) ճամբարներ, «ՍԱՍ» համակարգեր, «Երկիր-երկիր» հրթիռներ եւ այլն:

Մեղադրյալի պաշտպան Արսենյանը հայտարարեց, որ «սա Բոջոյանի ինքնագործունեական ցուցմունքի նախագիծն է, եւ այն չպետք է դիտել որպես ապացույց, քանի որ չի պահպանվել դատավարության կարգը»:

Հիշեցնենք, որ Սուրադ Բոջոյանն իր նախնական ցուցմունքում խոստովանել է Թուրքիայի օգտին լրտեսելը, հետագայում հրաժարվել դրանից:

Սուրադ Բոջոյանն, ըստ պետական մեղադրողի, կատարել է ՄԻԹ-ի առաջադրանքները եւ Թուրքիա կատարած այցելության ժամանակ սովորական թղթի վրա արել գրառումներ հայկական բանակում կաբառակերության մասին, որ «Չարենցավանի փամփուշտներ արտադրող գործարանը չի աշխատում, եւ Հայաստանը Կիրգիզիայից է փամփուշտ ներմուծում», «հնարավոր է ռաջադրանք ստանում, արդյոք այդ գրառումները վնասո՞ւմ են Հայաստանին: Եթե այո, ապա ինչպես հասկանալ, որ «Հայաստանի Հանրապետություն» թերթի 2002 թ. նոյեմբերի 30-ի համարում մանրամասն տպագրվում է Բելառուսի բանակի մասին տեղեկատվություն եւ դա համարվում է սովորական, իսկ իմ հավաքածը՝ հայկական մամուլից, համարվում է հետախուզական տվյալներ»:

Դատավարության ժամանակ՝ որպես մեկ այլ իրեղեն ապացույց ներկայացվեց մի ծայներիզ, որի վրա կար ծայնագրություն Բոջոյանի եւ մի երգի միջեւ արված «Քուրդիստան» կոմիտեում: Այս հարցազրույցը եւ վերոնշյալ փաստաթուղթը, որ Երեւանում երգերը խնդրել էին թարգմանել Բոջոյանին, ամբաստանյալը տանում էր Թուրքիա, որպես ապացույց այն բանի, որ Հայաստանում կան PKK-ականներ:

Մեկ այլ «դոսյեում» Բոջոյանը թուրքերեն գրել էր Հայաստանի արտագաղթի, ծնելիության, ՀՀ ՊՆ փոխնախարար Արթուր Աղաբեկյանի եւ մեծահարուստ Հովնանյանի դստեր ամուսնության, ԼՂՀ-ի «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի մասին եւ այլ մանրամասներ:

Պաշտպան Արսենյանը մեկ անգամ եւս կրկնեց, որ Բոջոյանի ներկայացրած նյութերը տպագրվել են հայկական ՁԼՄ-ներում, եւ դրանք չպետք է դիտել որպես իրեղեն ապացույցներ:

Դատարանում վեճ սկսվեց հետեւյալ հարցի շուրջ՝ ինչպե՞ս է պատահում, որ Սուրադ Բոջոյանի հետ շփված բոլոր թուրք լրագրողները ՄԻԹ-ի գործակալներ են: Պետական մեղադրողը կարդաց այդ գործակալ-լրագրողների՝ Օզքանի, Բաալամըշի, Բիրանդի, մյուսների կենսագրականները ամենայն մանրամասնությամբ: Պաշտպան Արսենյանը այդ կենսագրականների իրական լինելու կասկած հայտնեց եւ հանդես եկավ միջնորդությամբ՝ փաստել, որ թուրք լրագրողների կենսագրականները համապատասխանում են իրականությանը:

Դատավարությունը կշարունակվի վաղը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Երկրորդ վկան՝ կարծես թե վստահ կեցվածքով

Ինչո՞ւ...

«Հոկտեմբերի 27-ի գործով դատավարության երեկվա նիստի ընթացքում նախ շարունակվեց վկա Ավետիք Մինասյանի հարցաքննությունը: Հարցեր տվեցին Կարեն Դեմիրճյանի իրավահաջորդի շահերի ներկայացուցիչ Աշոտ Սարգսյանն ու Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի շահերի ներկայացուցիչ Օլեգ Յունոեւը:

Աշոտ Սարգսյանին հիմնականում հետաքրքրում էր, թե ինչու ոստիկան Ավետիք Մինասյանն ուշադրություն չի դարձրել ժ. 15-ի համար տրված անցագրերով ժ. 17-ին մուտք գործել ցանկացողներին: Պրն Սարգսյանին հետաքրքրում էր նաեւ, թե անձրեւացնցի գրպանում 4 պահունակ տանող (մոտ 4 կգ կշռով) Վռամ Գալստյանն ինչո՞ւ ուշադրության չի արժանացել:

Վկան նշեց, որ այդ հանգամանքներին ուշադրություն չի դարձրել: Ապա Ավետիք Մինասյանը հեգնանքով ավելացրեց, որ չի նկատել եւ կարող էր չնկատել անգամ, եթե անցնող որեւէ մեկը մեջքին գնդացիր ունենար:

Նման պատասխանը շատ տարիմաստ ենթադրությունների տեղիք կարող է տալ:

Ինչեւէ, վկան մի քանի հակասական բաներ էլ ասաց: Նա դեռեւս նախորդ նիստին նշեց, որ Անդրանիկ Մանուկյանին ահաբեկչության օրը տեսել է 2 հոգու հետ, որոնք օգնել են վիրավոր Մանուկյանին իջնել աստիճաններով: Այդ 2-ից մեկը, ըստ վկայի, եղել է Խաչիկ Հովհաննիսյանը, որի սեփական ցուցմունքի համաձայն, ինքն այդ պահին տվյալ տեղում լինել չէր կարող:

Այս հանգամանքի հետ կապված հարցադրումներից հետո Ավետիք Մինասյանը նշեց, որ լսածից հետո սկսում է շփոթել:

Ինչ վերաբերում է Նաիրի Բաղալյանի երկրորդ անգամ Աժ մտնելու ժամանակ ծակված անցաթղթով անցնելուն, ապա վկան ասաց, որ եթե անցաթուղթը ծակված լիներ, նա կտեսներ:

Հետագա հարցերին էլ պատասխանները «չեմ հիշում, չեմ տեսել» տարբերակով սահմանափակվեցին, ինչը հունից հանեց Աշոտ Սարգսյանին: Վերջինս եզրակացրեց, որ վկան ակնհայտորեն խուսափում է ցուցմունք տալուց: Սա ասվեց ի գիտություն:

Այս ամենով հանդերձ, երկրորդ զկայի հարցաքննությունը նույնպես ավարտվեց: Վկային ասվել է, որ բնակության վայրը փոխելու դեպքում դատարանին տեղյակ պահվի՝ հնարավոր առերեսումների համար:

Ու թեեւ դատարան էր ներկայացել վկա, «27»-ի գործով նախկին ամբաստանյալ, համաներված Սարգիս Եթիմյանը, նա չհարցաքննվեց, քանի որ դատարանը նախօրոք որոշել էր վկաների հարցաքննությունը կատարել հնարավորինս մոտ դրվագներով:

Չորեքշաբթի դատավարությունը կշարունակվի, կներկայանա տուժող Ֆրունզե Խառատյանը:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Եվս 5 թեկնածուի առաջադրող կուսակցություններ

Դեկտեմբերի 6-ին, ժամը 18:00-ին կավարտվի հանրապետության նախագահի թեկնածուներ առաջադրող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ նախաձեռնող խմբերի գրանցման ժամկետը:

Իսկ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր երեկվա նիստի օրակարգի 5 կետով էլ գրանցեց եւս 5 թեկնածու առաջադրող կուսակցությունների եւ կազմակերպության:



Այսպես, օրակարգային առաջին կետով ԿԸՀ-ում գրանցվեց Գառնիկ Մարգարյանին հանրապետության նախագահի թեկնածու առաջադրող «Հայրենիք եւ պատիվ» կուսակցությունը:

Հաջորդ կետերով գրանցվեցին՝ Արամ Սարգսյանի թեկնածությունն առաջադրող Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, Վազգեն Մանուկյանի թեկնածությունն առաջադրող «Ազգային ժողովրդավարական միություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունը:

Օրակարգը սպառվեց Արամ Հարությունյանին հանրապետության նախագահի թեկնածու առաջադրող «Ազգային համաձայնություն» եւ Արշակ Սադոյանի թեկնածությունն առաջադրող «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցություններին ԿԸՀ-ում գրանցելու մասին ԿԸՀ որոշումներով:

Այսպիսով, առաջադրված թեկնածուների թիվը բոլորեց 10-ն ու դեռ կավելանա: Մնում է հուսալ, որ նախագահական ընտրությունների ժամանակ թեկնածուների քանակն այնքան չի լինի, որ քվեաթերթիկն իր երկարությամբ մոռացնել տա բովանդակությունն ու նշանակությունը:

Ա. Հ.

«Արցախ-Հայաստան» կուսակցությունը պաշտպանում է Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը

Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության արտահերթ համագումարը, որտեղ քննարկվեց այդ կազմակերպության դիրքորոշումը նախագահական ընտրությունների վերաբերյալ: Զեկուցումով հանդես եկած «Արցախ-Հայաստանի» վարչության նախագահ Սերգեյ Սելիմյանը հանգամանորեն, փաստացի տվյալներով վերլուծեց, գնահատեց հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած առաջընթացի բոլոր բնագավառները, որոնք եղել են Ռոբերտ Քոչարյանի ղեկավարության տարիներին, այդ թվում զեկուցողը հանգամանորեն գնահատեց նախագահի արտաքին քաղաքականությունը, Արցախի հիմնահարցի լուծման, Ցեղասպանության ճանաչման, սփյուռքայության հետ կապերի ամրապնդման, արտաքին տնտեսական կապերի ընդլայնման եւ այլ հարցեր:

Համագումարին ներկա էին եւ ելույթ ունեցան հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, գիտնականներ, երիտասարդության ներկայացուցիչներ: Համագումարը միաձայն որոշեց պաշտպանել Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը 2003 թ. նախագահական ընտրություններում եւ սատար կանգնել նրան հետագա գործունեության ընթացքում:

«ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Քննարկումներն արդյունք չեն տվել

«Ընտրական օրենսգրքի» շուրջ խորհրդարանական ուժերի միջեւ ընթացող բանակցություններն արդյունք չեն տվել: Առանցքային երեք հարցերի շուրջ կողմերը մնացել են իրենց կարծիքներին:

Դրանք են՝ հենց ընտրության օրը ընտրողին հնարավորություն տալ հանձնաժողովի համաձայնությամբ վերականգնել իր ընտրելու իրավունքը, երկրորդ՝ քվեաթերթիկների հետեւի երեսին կնքելը եւ այնպես ծալելը, որպեսզի այդ կնիքը եւ ստորագրությունը երեւան, եւ երրորդ՝ վստահված անձանց թվաքանակի մեծացումը:

Աժ քաղաքական մեծամասնությունը չի ընդունել դրանցից եւ ոչ մեկը: Այսուհանդերձ, «16»-ի խորհրդարանական ներկայացուցիչները դեռեւս չեն հստակեցրել իրենց առաջիկա քայլերն այս առումով: Նախագծի հեղինակ Շավարշ Քոչարյանը հայտնեց, որ դեռեւս ուժի մեջ է Աժ արտահերթ նիստ նախաձեռնելու տրամադրվածությունը:

Հատկանշական է, որ, ըստ Շ. Քոչարյանի, իրենց եւ ՀՅԴ-ի միջեւ վերոնշյալ երեք հարցադրումներից առաջին երկուսի առումով տարակարծություններ չկան: Հիշեցնենք, որ ՀՅԴ-ն Աժ երկրորդ ուժն է, որը նախաձեռնել էր «Ընտրական օրենսգրքի» փոփոխությունների մեկ այլ տարբերակ եւ «16»-ի նախագծի հետ դրել քննարկումների սեղանին:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ընտրություններ Ծովինարում

34-րդ ընտրատարածքն ընդգրկում է Մարտունու տարածաշրջանի չորս գյուղ՝ Զոլաքար, Վարդենիս, Ծովինար, Արծվանիստ եւ Վարդենիսի ամբողջ տարածաշրջանը: Տեղական ինքնակառավարման ընտրություններն ավարտվել էին Արծվանիստում, Զոլաքարում, Վարդենիսում: Իսկ Ծովինարում պետք է կայանային հոկտեմբերի 20-ին, բայց դրանք չկայացան հանձնաժողովի նախագահի ու անդամների վեճի պատճառով: Մարզպետի հրամանով նոր ընտրություն նշանակվեց դեկտեմբերի 1-ին՝ նոր հանձնաժողովի նախագահի ու անդամների կազմով:

Համայնքի ղեկավարի պաշտոնի համար դիմել էին 5, ավագանու անդամի՝ 16 թեկնածուներ: Համայնքի ղեկավարի թեկնածուները ներկայացնում էին տարբեր կուսակցություններ. Աբրահամյան Մարտիկ՝ ՀՅԴ, Գրիգորյան Գրիգորը, Հարությունյան Հարությունը եւ Մարտոյան Միհրն անկուսակցական են, իսկ Վարդանյան Վրույրը (գործող ղեկավարը)՝ ՀՀԿ-ից:

Ծովինար համայնքում ներկայումս բնակվում է մոտ 4500 բնակիչ, որոնցից ընտրողների թիվը 2843 է: Ընտրություններին մասնակցեց 2095, այսինքն՝ ընտրողների մոտ 80 տոկոսը: Ընտրություններն ընթանում էին շատ կազմակերպված ու թափանցիկ: Գյուղապետի պաշտոնում ընտրվեց թեկնածուներից Միհր Մարտոյանը՝ հավաքելով առավելագույն ձայն (705)՝ 122 ձայնով առաջ անցնելով գործող գյուղապետ Վրույր Վարդանյանից (583 ձայն), երրորդ տեղում էր Հարություն Հարությունյանը (486 ձայն), չորրորդում՝ Մարտիկ Աբրահամյանը (101 ձայն), իսկ Գրիգոր Գրիգորյանը հավաքել էր ընդամենը 53 ձայն՝ երկու ընտրական տեղամասերի արդյունքներով:

Դեկտեմբերի 1-ին միաժամանակ կայացան Սոթքի ավագանու ընտրությունները, ուր մասնակցության հայտ էր ներկայացրել 7 համագյուղացի, 7-ն էլ ընտրվեցին առանց խախտումների:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կովկասեան խաղաղականութիւնը՝ «կոմոլեմենտարիզմ»

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Վրաստանի շուարած նախագահը Շեւարդնաձէն, նոր գիւս մը ըրած ըլլալու յաւակնութեամբ վերջերս յայտարարեց, թէ այսուհետեւ իր երկրին արտաքին խաղաղականութիւնը հիմնուած պիտի ըլլայ «կոմոլեմենտարիզմի» սկզբունքին վրայ, այսինքն մեծ պետութեանց կովկասեան շրջանի շահերը պիտի համադրէ, փոխանակ զանոնք իրար հակադրելու:

Ասիկա կը նշանակէ ամբողջական պարտութիւնն ու սնանկութիւնը ցարդ կիրարկուած անհեռատես եւ անմիտ այն խաղաղականութեան, զոր Վրաստան փորձեց կիրարկել լուծելու համար իր արտաքին ու ներքին խնդիրները: Այդ խաղաղականութեան արդիւնքը այն եղաւ, որ երկիրը աւելի եւս նահանջեց տնտեսապէս եւ մասնատուեցաւ խաղաղականապէս: Այդ վիժած խաղաղականութիւնը հիմնուած էր 19-րդ դարու յայտնի «հեռուի սուրբին» սողսալու ռոմանթիք սկզբունքներու վրայ:

Անկախութեան վերջին տասնմէկ տարիներուն, մինչ Հայաստան կ՚ամրապնդէր իր խաղաղական ներքին կայունութիւնը, Թբիլիսիի իշխանաւորները մի առ մի կորսնցուցին նախ Աբխազիան, ապա Հարաւային Օսեթիան ու փաստօրէն նաեւ կեդրոնական կառավարութեան ազդեցութիւնը Աջարիոյ ու Ջաւախքի վրայ, եւ փոխանակ ներքնապէս լուծելու երկիրը բաժնող խնդիրները, հիւրընկալեցին չեչեն ահաբեկիչները, զայրացնելով Ռուսաստանը, եւ որոնդութեան հրաւիրեցին ամերիկեան զինուորական խորհրդատուները Պանկիսի կիրճին մէջ ահաբեկիչ փնտռելու պատրուակով զինուորական ներկայութիւն մը հաստատելու:

Այս անհեռատես եւ արկածախնդիր վարքագիծը Վրաստանը հասցուց անդունդի եզրին: Անդրադառնալով այս աղետալի ընթացքին, Շեւարդնաձէն կը փորձէ ետ դարձ մը կատարել եւ որդեգրել աւելի հաւասարակշռուած եւ համադրեալ խաղաղականութիւն մը՝ շաս հաւանաբար օգտուելով ու ներշնչուելով Հայաստանի արտաքին խաղաղականութեան օրինակէն ու փորձէն:

Արդարեւ, Հայաստան երկար ատեն է ի վեր արդիւնաւէտ կերպով կը կիրարկէ այդ խաղաղականութիւնը, որ ցուրտ պատերազմի վախճանէն ետք ստացած էր նոր իմաստ եւ լիցք: Ցուրտ պատերազմի օրերուն փոքր երկիրներու խաղաղականութիւնը հիմնուած կ՚ըլլար մէկ կամ միւս գերհզօր պետութեան յարելով՝ օգտուիլ փորձել անոր տնտեսական, խաղաղական եւ ռազմական միջոցներէն: Ցուրտ պատերազմի վախճանը շրջեց այդ սկզբունքը, եւ փոքր պետութիւնները սկսան հասկնալ, թէ իրենց համար աւելի ձեռնտու է մեծերու շահերը համադրել, քան հակադրել իրարու, քանի մեծ պետութիւնները իրենց կարգին կը ջանան համադրել զանոնք ոչ թշնամական դիրքերէ: Հայաստան եւս բաւական ծանր տուրք վճարեց, մինչեւ որ յաջողեցաւ մշակել ու գործադրութեան դնել այդ սկզբունքը:

Անկախութեան առաջին տարիներուն Հայաստանի արտաքին խաղաղականութիւնը լուրջ վերիվայրումներ ապրեցաւ, մանաւանդ երբ բնորոշուեցաւ անօրինակ միտում մը: «Երրորդ ուժի բացասման» սկզբունքի կնքահայրն էր այլապէս չափազանց հայրենասէր, մաքրակրօն հայագէտ Ռաֆայէլ Իշխանեանը, որ կը հաւատար, թէ պատմականօրէն Հայաստան Ռուսաստանին ապաւինելով բաւարար չափով չէր օգտուած եւ կամ աւելին տուած էր ծանրօրէն, հետեւաբար Հայաստան պէտք էր փոխէր իր ուղղութիւնը դէպի... Թուրքիա: Չէր բաւեր, որ վարժարեն մը, անտեսելով բոլոր պատմական տուեալները՝ հրապարակ կը նետէր համբակ խաղաղականութիւն մը՝ օրուան իշխանաւորներն ալ կը փորձէին կիրարկութեան դնել զայն իրենց առօրեային մէջ, մինչեւ որ Ռուսաստան, օմոններու օժանդակութեամբ, արիւնալի դաս մը պարտադրեց Ղարաբաղի հայութեան, հողային ծանր կորուստներով, ինչպէս աւելի ուշ պիտի ըներ Վրաստանին անուղղակիօրէն անջատելով Աբխազիան անոր հողային ամբողջականութենէն: Բարեկիր, Հայաստան պէտք ունի ռուսական պաշտպանութեան, կախուած է Պարսկաստանի տնտեսութենէն եւ օրակարգի հարց դարձած է մեղմել թրքական թշնամանքն ու շրջափակումը: Միւս կողմէ պէտք ունի ամերիկեան օժանդակութեան եւ ռազմավարական փորձին:

Ուրեմն Հայաստան, օգտուելով հանդերձ ամերիկեան առաջարկներէն՝ առաջինը եղաւ ռուսական ռազմախարիսխ մը հիւրընկալելու իր սահմաններէն ներս եւ տնտեսական կայուն կարգեր հաստատեց Պարսկաստանի հետ, երկու պաշտպանական ալ Ամերիկային ըսելով, որ «կը հասկնայ» առաջինին պատմական նշանակութիւնը եւ երկրորդին վերադրումի կարիքը, որ ան ալ այդ քայլերը ներդաշնակ չըլլան ամերիկեան անմիջական շահերուն: Սակայն Աֆղանստանի պատերազմի օրերուն, երբ Ամերիկա կարիքն ունեցաւ Հայաստանին, այս վերջինը աւելիով կատարեց իրմէ ակնկալուածը: Ռուսաստան, իր կարգին «կը հասկնայ» Հայաստանի կարգերուն նշանակութիւնը Արեւմուտքի եւ յատկապէս Ամերիկայի հետ, ուր խաղաղականօրէն գործօն հայութեան նշանակալից զանգուած մը կ՚ապրի: Հայաստանի իշխանութիւնները եւ յատկապէս «կոմոլեմենտարիզմի» ճարտարապետը Վարդան Օսկանեան, յաջողած են այս բոլոր տուեալները համադրելով մշակել եւ գործադրել Հայաստանի համար կենսական ու խոհեմ արտաքին խաղաղականութիւն մը՝ հակառակ սփիւռքի կարգ մը պոլիտիկոսներու թերահաւատութեան: Ադրբէջան երկար ատեն յոխորտաց, թէ առաջինն է նախկին խորհրդային հանրապետութիւններէն, որ դուրս դրած է Ռուսաստանի ռազմական կիրարկումը՝ Հայաստան ունի ռուսական պաշտպանութեան, կախուած է Պարսկաստանի տնտեսութենէն եւ օրակարգի հարց դարձած է մեղմել թրքական թշնամանքն ու շրջափակումը: Միւս կողմէ պէտք ունի ամերիկեան օժանդակութեան եւ ռազմավարական փորձին:

Ուրեմն Հայաստան, օգտուելով հանդերձ ամերիկեան առաջարկներէն՝ առաջինը եղաւ ռուսական ռազմախարիսխ մը հիւրընկալելու իր սահմաններէն ներս եւ տնտեսական կայուն կարգեր հաստատեց Պարսկաստանի հետ, երկու պաշտպանական ալ Ամերիկային ըսելով, որ «կը հասկնայ» առաջինին պատմական նշանակութիւնը եւ երկրորդին վերադրումի կարիքը, որ ան ալ այդ քայլերը ներդաշնակ չըլլան ամերիկեան անմիջական շահերուն: Սակայն Աֆղանստանի պատերազմի օրերուն, երբ Ամերիկա կարիքն ունեցաւ Հայաստանին, այս վերջինը աւելիով կատարեց իրմէ ակնկալուածը: Ռուսաստան, իր կարգին «կը հասկնայ» Հայաստանի կարգերուն նշանակութիւնը Արեւմուտքի եւ յատկապէս Ամերիկայի հետ, ուր խաղաղականօրէն գործօն հայութեան նշանակալից զանգուած մը կ՚ապրի: Հայաստանի իշխանութիւնները եւ յատկապէս «կոմոլեմենտարիզմի» ճարտարապետը Վարդան Օսկանեան, յաջողած են այս բոլոր տուեալները համադրելով մշակել եւ գործադրել Հայաստանի համար կենսական ու խոհեմ արտաքին խաղաղականութիւն մը՝ հակառակ սփիւռքի կարգ մը պոլիտիկոսներու թերահաւատութեան: Ադրբէջան երկար ատեն յոխորտաց, թէ առաջինն է նախկին խորհրդային հանրապետութիւններէն, որ դուրս դրած է Ռուսաստանի ռազմական ներկայութիւնը իր հողամասէն, սակայն, Բաքուի իշխանաւորները չյաջողեցան երկրին ներքին հաւասարակշռութիւնը երաշխաւորել մինչեւ որ երկարաժամկէտ համաձայնութիւն մը չկնքէին Ռուսաստանի հետ, վերջնոյն ռազմական դիտակայանները պահելով Ադրբէջանի հողամասին վրայ: Ինչպէս կը տեսնուի, Ալիեւ աւելի լռելեայն կիրարկած եղաւ «կոմոլեմենտարիզմի» սկզբունքով տարուող խաղաղականութիւնը, ինչ որ իր կարգին դուռ բացաւ քարիւղային պայմանագիրներ իրականացնելու, պայմանագիրներ, որոնք առկախ մնացած էին մինչեւ վերջերս, Ադրբէջանի ներքին անկայունութեան եւ ամբողջ կովկասեան շրջանի անապահովութեան պատճառաւ: Ինչպէս կը տեսնուի, հակառակ Հայաստանի նկատմամբ կարգ մը թշնամական քայլերուն՝ Շեւարդնաձէ իր շուարումի խաղաղականութեան ելքը կը գտնէ Հայաստանէն, մեծաբռնդ յայտարարելով իր յարումը «կոմոլեմենտարիզմի» խաղաղականութեան, կարծել տալով, թէ իր գիւտն էր այդ սկզբունքը:

Այնքան ատեն, որ մեծ պետութեանց շահերը կը հակադրուէին իրարու՝ անկարելի էր մնայուն խաղաղութիւնը ապահովել Կովկասի մէջ, սակայն հիմա, որ Կովկասի երեք երկիրները համանման սկզբունքներ որդեգրած են մեծերու շահերուն նկատմամբ, խաղաղութիւնը կրնայ աւելի շօշափելի հեռանկար մը դառնալ այդ տանջուած աշխարհամասին մէջ:

Ուրեմն, Կովկասի խաղաղական նոր իրապաշտութիւնը, հայկական մկրտութեամբ, բայց օսար տարազուով կը կոչուի «կոմոլեմենտարիզմ»:

Դեսդայր, ԱՄՆ

Երկար սպասված վերադարձի հնարավորություն

Զինծառայություն չանցած երիտասարդների համար

«Ես Արմանն եմ ու հիմա գնվում եմ Հայաստանից դուրս: Փնտրում եմ պաշտոնական տեղեկատվության որեւէ աղբյուր նոր ընդունվելիք օրենքի նախագծի մասին, որը վերաբերելու է զինծառայություն չանցած այն երիտասարդներին, ովքեր այսօր բաղնվում են օտար երկրներում»: Ես լսել եմ, որ, համաձայն դրա, որոշակի գումար վճարելուց հետո նրանք հնարավորություն կունենան վերադառնալ հայրենիք եւ օրինական կարգավիճակ ստանալ: Եթե կարող եք, օգնեք ինձ առավել մանրամասն ինֆորմացիայով», ահա այսպիսի խնդրագիր-նամակ էր օրերս հայտնվել «Ազգի» ինտերնետային էջում:

Առաջին արձագանքները սպասել չտվեցին, եւ սա ամենատույգ վկայությունն է, որ «Սահմանված կարգի խախտումով պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքի նախագիծը վաղուց սպասված իրողություն էր: Մենք չգիտենք, թե Արմանը քանի տարեկան է, ինչ կարգավիճակով է ապրում դրսում, բայց թյուրըմբռնումներից հենց սկզբից խուսափելու համար նշենք կարեւորը՝ նոր օրենքը վերաբերելու է միայն այն քաղաքացիներին, ովքեր տարիներ շարունակ խուսափելով զորակոչից, հիմա արդեն 27 տարեկան են կամ դրանից բարձր: Եվ 27-ից ցածր տարիքի այն անձանց, ովքեր այս կամ այն կերպ ձեռք են բերել տարկեցման իրավունք, եւ պետությունն արդեն չի կարող զորակոչել նրանց: Ասենք, 2 կամ ավելի երեխա ունեն, խուսափել են ծառայությունից, հետո, սակայն, որեւէ բուհ են ընդունվել կամ տարկեցման իրավունք ստացել վաստակաշատության, խնամքի տակ հաշմանդամ ծնողներ ունենալու պատճառով եւ այլն: Օրենքը չի վերաբերելու նրանց, ովքեր այս պահին զինակոչային տարիքում են եւ դեռ կարող են վերադառնալ ու ծառայել: Իսկ եթե ոչ, շարունակելու են մնալ քրեական հետապնդումների ու հետախուզման մեջ:

Այս նախագիծը վաղուց էր պատրաստ՝ 2000 թ., բայց քննարկումները նոր-նոր են ընթանում, որովհետեւ ժամանակին մեծ հակազդեցության հանդիպեց: Անհանդուրժողականության, գրեթե թշնամանքի մթնոլորտ էր առաջացել. հիմնականում արցախյան ազատամարտի մասնակիցները եւ նրանք, ում զավակները դժվար տարիներին ծառայել էին բանակում, լսել անգամ չէին ուզում խնդիրը փոխզիջումային ինչ-որ տարբերակով լուծելու մասին: Բայց, ի վերջո, տարաբնույթ պատճառներով ու հանգամանքների բերումով բանակից խուսափածները մեր քաղաքացիներն են, որոնցից շատերը, ինչպես Արմանը, Հայաստան վերադարձի ուղիներ են որոնում: Փակե՞լ դռները նրանց առջեւ: Նրանց մեջ շատ են նաեւ այնպիսիք, ովքեր այս վիճակում են հայտնվել ակամա՝ ընտանիքն արտագաղթել է եւ իր հետ տարել զինապարտության տարիքից շատ փոքր զավակին: Ա՛ռ յուրաքանչյուրն օրենքի նախագիծը տարբերակված վճարաչափեր է սահմանում: Իբրեւ ընդհանուր ուղենիշ՝ անօրինականորեն բաց թողնված 1 զորակոչի համար պահանջվում է վճարել նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը: 1991 թ. սեպտեմբերի 21-ից առ այսօր 20 զորակոչի առկայության դեպքում դա կազմում է 2 մլն դրամ (20x100 հազար դրամ), մոտավորապես 3,5–4 հազար դոլար: Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում առողջական վիճակի պատճառով տարկետում ձեռք բերած քաղաքացիներից կգանձվի նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը: Յուրաքանչյուր զորակոչի համար նվազագույն աշխատավարձի 30-ապատիկն են վճարելու պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում խնամքի տակ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ ունեցող զինապարտները:

Ընդհանրապես ոչինչ չի գանձվելու 3 կամ ավելի երեխա ունեցող քաղաքացիներից, առանց մոր մեծացող 2 երեխա ունեցողներից: Համապատասխան վճարումներից հետո բանակից խուսափածները զինգրքույկ կստանան, կհաշվառվեն պահեստազորում եւ մյուսների նման կմասնակցեն ուսումնական զորահավաքների ու զորավարժանքների: Օրենքի նախագծի համահեղինակները ներողամտության մի լուսանցք են թողնում 27-ն անցած այն երիտասարդների համար, ովքեր չեն ուզում կամ ի վիճակի չեն վճարելու նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը: Դեռեւս օրենքում չամրագրված, սակայն միանգամայն իրական է համարվում նրանց քրեական պատասխանատվությունից ազատելը, եթե գան ու ցանկություն հայտնեն ծառայելու զինված ուժերում: Այսօր այստեղ մինչեւ 45 տարեկան պայմանագրային կարգով ծառայողներ կան, եւ միանգամայն իրական է նրանց ընդգրկումը նույնպես: Իսկ եթե գումար չունեն, բայց չեն էլ ուզում ծառայել, կենթարկվեն քրեական պատասխանատվության: Մտավախությունը, թե նոր օրենքը կարող է բանակից խուսափելու երեւույթի հենարան ու նախադեպ դառնալ, հարկադրել է ընդգծել նաեւ հետեւյալը՝ օրենքը մնկանգամյա գործողության կյանք է ունենալու: Նրա ներգործությանը ենթակա են միայն 1991 թ. սեպտեմբերի 21-ից մինչեւ օրենքի ընդունման օրը զորակոչային տարիքն անցած կամ զորակոչի ոչ ենթակա անձինք: Պաշտոնական տեղեկատվությամբ, նրանց թիվն այսօր 5000-ի է հասնում:

Իհարկե, ցանկացած օրենք, ինչպես այս մեկը, ինչքան էլ մանրակրկիտ մշակված ու քննարկված լինի, ի վիճակի է ուղենշելու միայն գործողության ընդհանուր սկզբունքները: Կյանքը միշտ ավելին է առաջարկում, հաճախ՝ անսպասելի նրբերանգներով, որոնք պիտի կարգավորվեն ենթաօրենսդրական ակտերի միջոցով: Օրինակ, ի՞նչ է լինելու այն մարդկանց հետ, ովքեր արդեն այլ երկրի քաղաքացի են, բայց զինապարտության տարիքի կամ 27-ն անց եւ, այնուամենայնիվ, ուզում են վերադառնալ Հայաստան: Ենթարկվելո՞ւ են քրեական պատասխանատվության: Խնդիրներ չե՞ք ունենա այլ պետությունների հետ, որոնք հաճախ չափազանց նախանձախնդիր են իրենց քաղաքացիների իրավունքները պաշտպանելու հարցում, եւ որոնցից շատերի հետ այս առթիվ պայմանագրային որեւէ հարաբերություն առկա չէ: Սակայն, ըստ օրենքի նախագծի համահեղինակ, Աժ պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանձնաժողովի անդամ Ֆիլարետ Բերիկյանի, նախագիծը ենթադրում է նաեւ այդ կարգի իրողության լուծման բանալի՝ ոչինչ, որ արդեն այլ երկրի քաղաքացի են, բայց եթե Հայաստան են գալու եւ այստեղ իրենց նկատմամբ քր. գործ կամ հետախուզում է հարուցվում, պետք է վճարեն օրենքով նախատեսված գումարը: Մյուս կողմից, առկա է նաեւ մեկ այլ իրողություն: Խորհրդային կարգերի փլուզումից հետո այլ երկրների պահանջների հետ շատ հաշվի չնստելով, Ռուսաստանը մյուս ազգերի ներկայացուցիչների հետ հայերին էլ հետապնդությամբ քաղաքացիություն շնորհեց: Եվ շատ հայ երիտասարդներ այսօր արդեն իսկ ծառայել են Ռուսաստանի զինված ուժերում: Իսկ ընդհանրապես հստակ թվեր չկան, թե արտերկրում այսօր զինապարտության ենթակա քանի երիտասարդ ունենք: Լոկ տեսական դիտարկումներով ենթադրվում է, որ 10 տարվա ընթացքում երկիրը լքել են 16 հազարը: Դա պատերազմի սարսափով ահագնացած արտագաղթի ալիքով, սոցիալական սրացումներով ժամանակաշրջան էր: Հիմա վիճակն անհամեմատ փոխվել է, եւ շատերը վերականգնելով հին, գեղեցիկ ավանդույթը՝ կրկին դիոլ-զուռնայով են բանակ ճանապարհում իրենց զավակներին:

«Այս օրենքը նույնիսկ արդեն շատ է ուշացել, պիտի ընդունվեր 2 տարի առաջ, երբ նախագիծն արդեն կար: Այդ 2 տարվա ընթացքում մենք կորցրեցինք մեր հայրենակիցների մի զանգվածի, որը հասցրեց վերջնականապես հիմնավորվել դրսում, որը գուցե դեռ ուզում էր վերադառնալ հայրենիք», ասում է Ֆիլարետ Բերիկյանը:

Հնարավո՞ր է արդյոք, որ 5–10 տարի հետո, նույն տրամաբանությամբ, նոր օրենքի նախագիծ մշակվի, որը դուռ կբացի զինապարտների հաջորդ քարավանի համար: Օրենքի նախագծի համահեղինակները պնդում են՝ ոչ: Այդ դեպքում դարձյալ կորցնելու ենք մեր ազգակիցների մի մեծ խմբի, որն այս պահին ինչ-ինչ, գուցե օբյեկտիվ հանգամանքների պարտադրանքով ի վիճակի չէ վերադառնալու հայրենիք: Եվ նրանց եթե ոչ երկրորդ, ապա երրորդ սերունդը դրսում ենթարկվելու է անխուսափելի ուծացման:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԴԻԼՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ՊԵԿԻՆ

Չինաստանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպումից հետո ստորագրվեց 5 փաստաթուղթ

Պեկինում երեկ ՉԺՀ նախագահ Ցզյան Ցզեմինը հանդիպում է ունեցել նախորդ օրվա երեկոյան այնտեղ ժամանած ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Բանակցության ընթացքում շեշտվել է Ռուսաստանի եւ Չինաստանի ղեկավարների այն տեսակետը, որ երկու երկրների բարիդրացիության, բարեկամության եւ համագործակցության հարաբերությունների զարգացումը, ռազմավարական փոխգործողության ընդլայնումը ունեն «լայն հեռանկարներ եւ վիթխարի ներուժ»:

Նախագահների ընդունած համատեղ հայտարարության մեջ ասվում է, որ երկու պետությունների ղեկավարները լի են վճռականությամբ «այսուհետեւ էլ բարձրացնելու ներկայումս գոյություն ունեցող բարեկամության ու փոխշահավետ համագործակցության մակարդակը»: Ինտերֆաքս գործակալությունն ընդգծում է, որ փաստաթղթում Ռուսաստանն ու Չինաստանը վճռականություն են հայտնում իրենց տարածքներում թույլ չտալու այնպիսի կազմակերպությունների ու խմբերի ստեղծում, որոնք կարող են վնաս պատճառել հարեւան երկրի ինքնիշխանությանը, անվտանգությանը եւ տարածքային ամբողջականությանը:

«Նյու Յորքի, Մոսկվայի, Բալի կղզու դեպքերը եւ միջազգային ահաբեկիչների մյուս հանցավոր քայլերը վկայում են, որ ահաբեկչությունը, անջատականությունը եւ ծայրահեղականությունը լուրջ սպառնալիք են ինքնիշխան պետությունների անվտանգության, ընդհանուր խաղաղության եւ կայունության համար», նշվում է հայտարարության մեջ: Հանդիպման ժամանակ նաեւ հայտարարվել է, որ ռուսական կողմը Տիբեթն ու Տայվանը համարում է Չինաստանի անբաժան մասեր:

Հանդիպման ավարտից հետո ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը լրագրողներին հայտարարեց, որ ռուս-չինական հարաբերություններում փաստորեն չի մնացել որեւէ լուրջ տարաձայնություն: ՉԺՀ նախագահ Ցզյան Ցզեմինն իր հերթին բանակցությունը գնահատեց «շատ հաջող եւ բովանդակալի»: Նա հույս հայտնեց, որ Ռուսաստանն ու Չինաստանը կլինեն «հավերժական գործընկերներ»: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, հանդիպման ավարտից հետո ստորագրվել է 5 փաստաթուղթ: Առաջինը ՌԴ եւ ՉԺՀ պայմանագիրն է դատապարտված անձանց հանձնելու վերաբերյալ: Երկրորդն արձանագրություն է երկու երկրների կառավարությունների ղեկավարների կանոնավոր հանդիպումներ անցկացնելու մասին:

Նաեւ ստորագրվել են ՌԴ հարկային ոստիկանության եւ ՉԺՀ հանրային անվտանգության նախարարության համաձայնագիր, ՌԴ Կենտրոնական բանկի եւ ՉԺՀ ժողովրդական բանկի համաձայնագիր, ինչպես նաեւ հուշագիր չինական սարքավորումների արտահանման դիմաց ՉԺՀ-ին 10 տարով 200 մլն դոլար հատկացնելու մասին:

Պ. Ք.

Իրանում առայժմ զենք չեն գտել

Միջազգային տեսուչներն արդեն 5 օր աշխատել են Իրանում, բայց առայժմ ստուգումների ընթացքում միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքի հետքեր չեն հայտնաբերվել: Այդ մասին երեկ ամերիկյան ABC հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Մուհամմեդ ալ Բարադեյը: Նա ավելացրել է, թե առայժմ չարժե հետեւություններ անել Իրանում հիշյալ զինատեսակների բացակայության վերաբերյալ, քանի որ անցկացվելու են օդի եւ շրջակա միջավայրի նորանոր ստուգումներ, կատարվելու են անսպասելի ստուգայցեր: Եթե Իրանում միջազգային տեսուչների աշխատանքը որեւէ ձեւով խոչընդոտվի, ապա ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դա կհամարի իր ընդունած թիվ 1441 բանաձեւի խախտում:

Ոչթեր գործակալության տվյալներով, Մուհամմեդ ալ Բարադեյի գլխավորած տեսուչների խումբը երեկ անակնկալ կերպով այցելել է Բաղդադից հարավ գտնվող «Ալ Կարամախ» գիտահետազոտական համալիր, որը մտնում է Իրաքի ռազմական շինարարության նախարարության կառույցի մեջ: Համալիրն անցյալում ճարտարագիտական մշակումներ է արել իրաքցի զինվորականների համար: Դա Իրանում տեսուչների այցելած 14-րդ օբյեկտն էր:

Նախորդ օրն անգլո-ամերիկյան օդուժը ռմբակոծել էր Բասրայի շրջանի որոշ նավթահանքեր: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, զոհվել էին 8 եւ վիրավորվել 12 իրաքցիներ:

Իրաքցիները թաքցնում են զանգվածային բնաջնջման զենքը

Պնդում է Լոնդոնի «Թայմսը»

Բրիտանական հատուկ ծառայությունների տվյալներ վկայակոչելով՝ Լոնդոնի «Թայմս» թերթը գրում է, թե իրաքցիները տներում թաքցնում են զանգվածային բնաջնջման զենքի տարրեր: Իրաքցիների ռադիոկայանի մի շարք կալանումներից պարզվել է, որ նախագահ Սադդամ Հուսեյնն իր ենթականերին, գիտնականներին եւ կառավարող կուսակցության անդամներին հրամայել է տներում թաքցնել զանգվածային բնաջնջման զենքի գլխավոր տարրերը, քիմիական նյութերը եւ բանկարժեք էլեկտրոնային սարքերը: Գործողությանը մասնակցում են նաեւ առանձին շարքային քաղաքացիներ: Այլ տվյալների համաձայն, գյուղացիներին պարզապես կարգադրված է քիմիական նյութերը թաքցնել պարարտանյութերի մեջ:

Թերթը պնդում է, թե Իրաքում ստուգումներ իրականացնող ՄԱԿ-ի տեսուչները ծանոթ են հատուկ ծառայությունների հետեւություններին, բայց նման պայմաններում տեսչական առաքելությունը փաստորեն անիրագործելի է դառնում: Չէ որ անհնար է ստուգել բոլոր տները: Նաեւ հայտնի չէ, թե որտեղից պետք է սկսել ստուգումները:

Համաձայն «Թայմսի» տվյալների, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը եւ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն այնքան լուրջ էին ընդունել հատուկ ծառայությունների տեղեկատվությունը, որ մտադրվել էին պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել Իրաքի ղեկավարությանը, իսկ իրաքցիներին համագործակցության կոչ անել: Սակայն նման մտադրության վերաբերյալ պաշտոնական մեկնաբանություն ստանալ չի հաջողվել:

Միաժամանակ իրաքցի պաշտոնյաներից մեկը Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «Ալ Ղուդս ալ արաբի» թերթին տված հարցազրույցում նշել է, որ Իրաքն ունի քիմիական զենք, այն կիրառել է մի շարք հակամարտությունների ընթացքում եւ «կրկին անվարան կկիրառի» Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալման վտանգի դեպքում: Նույն թերթի տվյալներով, Իրաքն ունի մի քանի տոննա քիմիական ու կենսաբանական զենք եւ երկու տասնյակ «Սքադ» հրթիռներ, ինչպես նաեւ գաղտնաբար միջուկային ծրագիր է մշակում:

Արեւմուտքի զորքերը շատ լուրջ են վերաբերվում մարտադաշտում այդ զինատեսակների օգտագործման պատանալիին: Բրիտանացի բարձրաստիճան զինվորականներից մեկը նշում է, որ հիշյալ զինատեսակները թեեւ «այնքան էլ արդյունավետ չեն» մարտադաշտում, բայց «հոգեբանական վիթխարի արդյունք» կունենան, քանի որ քիմիական զենքի կիրառման դեպքում «զինվորներից քչերը կկարողանան շարունակել մարտական գործողությունները»:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

«Հայերը չհասկացան Լեւոն Տեր-Պետրոսյանին»

Ասում է Ալիեւի օգնականը

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի՝ արտաքին կապերի պատասխանատու Նովրուզ Մամեդովը Բաքվի «Էխո» թերթին տված հարցազրույցում ասել է. «Այս տարի մենք հաջողություն ունեցանք բոլոր ոլորտներում, բացի դարաբաղյան հակամարտության կարգավորումից: Նախագահը մեկ անգամ չէ, որ արտահայտել է իր դժգոհությունը Մինսկի խմբի գործունեությունից: Մամուլում արվում են առաջարկություններ՝ հրաժարվել ԵԱՀԿ-ի ծառայություններից եւ դարաբաղյան խնդիրը փոխանցել ՆԱՏՕ-ին կամ ՄԱԿ-ին: Պետք է ասեմ, որ ԼՂ խնդիրը իրականում շատ բարդ է՝ անկախ նրանից, թե ով է դրա կարգավորմամբ զբաղվում»: Մամեդովը կրկին մեղադրել է Հայաստանին՝ նշելով, թե հենց հայկական իշխանությունների ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով է հարցի կարգավորումը ձգձգվում: «Հիշվում է Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումը ժողովրդին՝ հայ ժողովրդի չափից ավելի ցանկությունը միշտ խանգարել է նրա առաջընթացին: Նա գրել է. «Եթե Հայաստանն այսօր չընդունի առաջարկությունները, վաղն այդ առաջարկությունների փոքր մասն էլ չի ստանա: Բայց հայերը չհասկացան Տեր-Պետրոսյանին», նշել է Մամեդովը:

Իրականում ՀՀ առաջին նախագահն իր հայտնի հոդվածում ասում էր. «Հայաստանն ու Դարաբաղն այսօր ուժեղ են, քան երբեւէ, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, աղագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպես բազմիցս եղել է մեր պատմության մեջ»:

Մամեդովն ակնարկել է, որ խնդրի ռազմական ճանապարհն իրատեսական չէ, քանի որ վերջ ի վերջո ցանկացած պատերազմ ավարտվում է խաղաղ բանակցություններով: «Նշանակում է, ավելի լավ գնալ բանակցությունների ճանապարհով», ասել է Մամեդովը:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումը կսկսվի մոտ ժամանակներս

Հայտարարել է Վրաստանի նախագահը

ԹԲԻԼԻՍԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրաստանի կառավարությունը «բնապահպանական թույլտվություն» է տվել մոտ ժամանակներս Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման աշխատանքների սկսվելուն: Այդ մասին այսօր հայտարարել է Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն: Ելույթ ունենալով Ազգային ռադիոյի ուղիղ եթերով՝ նա ասել է, որ «Բրիթիշ փեթրոլեում» ընկերության՝ նավթամուղի նախագծի գործարկուի, Վրաստանի նավթի կորպորացիայի եւ հանրապետության շրջակա միջավայրի պահպանության նախարարության ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցած «դժվարին բանակցություններում» պայմանավորվածություն է ձեռք բերվել «նախագծի իրականացման ընթացքում, նախեւառաջ Բորժոմի կիրճի հատվածում, անվտանգության լրացուցիչ միջոցների» ձեռնարկման մասին:

Էդուարդ Շեւարդնաձեն հայտնել է, որ «Բրիթիշ փեթրոլեում» ընկերությունը նավթամուղի անվտանգության երաշխիքներ է տրամադրել: Նախագահը նաեւ նշել է, որ իրավապահ մարմիններն անվտանգության լրացուցիչ միջոցներ կձեռնարկեն նավթատարի այն հատվածում, որն անցնելու է Բորժոմի կիրճի 17-կիլոմետրանոց տեղամասով:

ԿԺԴՀ-ում դոլարի փոխարեն եվրո

ՓԵՆՅԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԿԺԴՀ-ն արգելել է ամերիկյան դոլարների շրջանառությունն իր տարածքում, բոլոր արժութային հաշվարկները փոխադրվել են եվրոյի: Այսօր առաջին օրն է, երբ նոր փողերը հայտնվել են Հյուսիսային Կորեայի արժութային խանութներում: Փենյանում դոլարներն այժմ կարելի է փոխանակել սոսկ Արտաքին առեւտրի բանկում եւ երկրի երկու-երեք լավագույն հյուրանոցներում: Փոխարժեքն ակնհայտորեն խտրական է՝ 1 ամերիկյան դոլարով կարելի է գնել 0,96 եվրո: Իրադրությունը սասկանում է Կորեայում 1 եվրո արժողությամբ մեծաղադրամների բացակայությունից, ինչը խանութներում կտրուկ բարդացնում է փոխանակումն ու հաշվարկները: Թեեւ բանկի ծառայողները խոստանում են շաբաթվա ընթացքում սկսել մանր թղթադրամներ տալ:

ԿԺԴՀ-ի ֆինանսական կազմակերպությունների աշխատակիցները պնդում են, որ եվրոյին անցումը դարձել է Միացյալ Նահանգների տնտեսական պատժամիջոցների պատասխանը: Մինչդեռ ԿԺԴՀ-ում աշխատող օտարերկրացի մասնագետները վստահ են, որ այս վերափոխման իսկական իմաստը միանգամայն այլ է: Նրանց կարծիքով, երկրի ղեկավարությունը պարզապես ձգտում է բնակչությունից բռնագրավել կուտակված դոլարների զգալի մասը:

Քենիայի ահաբեկչության հետքերը տանում են Պրահա

Քենիայի Մոմբասա քաղաքի օդանավակայանից ոչ հեռու հայտնաբերված շարժական երկու հրթիռակայանները, որոնցից հրթիռակոծվել էր իսրայելական «Էլ Ալ» ավիաընկերության մարդատար օդանավը, կապված են Պրահայի «Ռուզինե» օդանավակայանի անցյալ տարվա միջադեպի հետ: Քենիական «Թելեգրաֆ» թերթը գրում է, որ 2001 թ. հոկտեմբերի կեսերին Պրահայի օդանավակայանի մոտակայքում հայտնաբերվել էր շարժական զենքային հրթիռակայանք, որը, ինքնության նյութերի համաձայն, նախատեսված էր Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսի ինքնաթիռի հրթիռակոծման համար:

«Մոմբասա պարադիզ» հյուրանոցի պայթեցման եւ Մոմբասայից թռած իսրայելական օդանավի հրթիռակոծման գործերով զբաղվող Իսրայելի անվտանգության ծառայությունների աշխատակիցները հայտնաբերել են բենզինի կանիստր, որն օգտագործվել է հյուրանոցի պայթեցման նպատակով: Ինչ վերաբերում է Մոմբասայից ոչ հեռու հայտնաբերված շարժական հրթիռակայանքներին, դրանց սերիական համարները մոտիկ են Պրահայի հրթիռակայանքի համարին: Երկու դեպքում էլ հրթիռակայանքները թողարկված են 1974 թ. չեխական Կովրսվո քաղաքի միեւնույն գործարանում: Մոմբասայի հրթիռակայանքները երկնագույն են ներկված, ըստ երեւույթին սերիական համարները ծածկելու նպատակով: Իսրայելցի քննիչներից մեկը «Թելեգրաֆին» հայտարարել է, որ «Եվրոպայի հատուկ ծառայությունների հետ համատեղ գործելու շնորհիվ հնարավոր կլինի բացահայտել ահաբեկչությունների կազմակերպիչին»:

Թերթը հավանական է համարում երկու հիմնական վարկած այն կապակցությամբ, թե ինչու Քենիայի երկնքում իսրայելական մարդատար օդանավն այնուամենայնիվ անվնաս է մնացել: Առաջինի համաձայն, հրթիռակայանքները սարքին են եղել, բայց դրանցից օգտված անձինք ցածր որակավորում են ունեցել: Ըստ երկրորդ վարկածի, «Էլ Ալ» ավիաընկերության օդանավն ունեցել է ինքնուղղորդվող հրթիռներից պաշտպանող համակարգ:

Գրահրատարակչությունն իրավական դաշտում

Գրահրատարակչության մասին խոսելիս անհնար է շրջանցել մի իրողություն եւ չընդգծել, որ այսօր Հայաստանում նկատել է ընթերցողների քանակը, որ գեղարվեստական գրականության նկատմամբ ավելի փիչ հետաքրքրություններ կան, գիրքը վաս է իրացվում, որ ոչաբոդանված չեն հեղինակային եւ հրատարակչական իրավունքները, գրողն առհասարակ անոչաբոդան է եւ նմանատիպ այլ հարցեր: Իհարկե, այս ամենի արմատները ոչեսք է փնտրել քաղաքական-հասարակական փոփոխությունների, սոցիալ-տնտեսական վիճակների, մարդու հոգեբանության փոփոխության, ճաշակութային իրականության դեգրադացիայի, համակարգչային տեղեկատվության արդի լայն հնարավորությունների եւ այլ իրողությունների մեջ: Վերջինն, իհարկե, այնքան էլ արդարացված չէ, որովհետեւ նույն արեւմուտքում, որտեղ վաղուց ի վեր համակարգչային տեղեկատվական դաշտը ձեւավորված է, անոչաբոդան քանակությամբ եւ ամենաբազմաոիպ գրականություն է ստեղծվում, տարածվում ու նաեւ սպառվում: Ցերեւս մեզանում կա գրականության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու, գիրքը գովազդելու, ներկայացնելու ավանդույթի պակաս: Որովհետեւ մեզ մոտ ամենահետաքրքրական եւ պոլիգրաֆիական լավագույն լուծումներով գրականությունն անգամ լայն սպառման առարկա չէ:

Հրատարակիչ-հեղինակ-իրացնող-սպառող (ընթերցող) շղթայի մեջ յուրաքանչյուր օղակ ունի օրենսդրական դաշտի պաշտպանվածության խնդիր:

«Քարենիրք» հասարակությունը գրին եւ ընթերցանությանը սատարող» ծրագրի շրջանակներում ուրբաթ եւ շաբաթ օրվա արագնա նիստը Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը տեղի ունեցավ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հովանավորությամբ. Հայաստանի գրողների միության, հրատարակիչների ազգային ասոցիացիայի, «Հայ հեղինակ» հասարակական կազմակերպության, ԳԱԱ գրականության ինստիտուտի, «Գարուն» ամսագրի նախաձեռնությամբ: «Վերնատուն» ընկերակցության կողմից երեք ամիս առաջ ստեղծված եւ ճշակված գրահրատարակչության մասին օրենքի նախագծի քննարկմանը մասնակցում էին Հայաստանում գործող գրեթե բոլոր հրատարակչությունների տնօրենները «Հայաստան», «Նաիրի», «Սարգիս Խաչենց», «Արեգ», «Վան Արյան», «Հայաստանի հանրագիտարան», «Սովետոն», «Առանց», «Ոսկան Երեւանցի», «Անկյունաքար», «Լույս», «Սաստոց», «Կոմիտաս», «Ազգային գրադարան» եւ այլն, ինչպես նաեւ իրավաբաններ, գրողներ, լրագրողներ:

Նիստը բացեց ՀՌՀ ՀԿ նախագահ Վահան Խաչատրյանը, որը ներկայացրեց ծրագրի շրջանակներում նախապես կատարված միջոցառումների շարքը (կլոր սեղան ԳԱ-ում, «Գարունում», ԳԱԱ-ում, հոդվածաշարեր, «Գրական» հեռուստատեսային հաղորդաշարը եւ մի քանի քննարկումներ գրահրատարակչության մասին օրենքի նախագծի շուրջ): Նախորդ քննարկումներում հրատարակիչների կողմից եղել են բազմաթիվ առաջարկություններ եւ զգացվել է օրենքի մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Եվ քանի որ փոփոխությունների գրավոր առաջարկներ չեղան (բացառությամբ Հրաչիկ Թամրազյանի, «Նաիրի» հրատ.), մասնակիցներն իրենց առաջարկությունները բանավոր ներկայացրին: Ներկաները միակարծիք էին, որ այս տարիներին գրահրատարակչական ոլորտն այն եզակիներից էր, որ չկարգավորվեց իրավական նորմերով: Միայն վերջերս ՀԱԱ-ի կազմակերպած նիստերը եւ քննարկումներն այս օրենքի շուրջ որոշակի քաղաքական մթնոլորտ են ձեւավորել: Եվ քանի որ օրենքի նախագծի այսպիսի անկատար տարբերակը չէր կարող ներկայացվել Ազգային ժողով, ուստի եւ առաջացավ վերամշակման, լրացման կարիք: Օրենքի մեջ առաջադրված ծրագրերը տվյալ ոլորտի քաղաքականությունը հստակեցնելու եւ հետագայում ավելի արդյունավետ գործելու համար են:

Փաստորեն, անցնող տարիներին հայ հրատարակիչները գործել են անոչաբոդան եւ կամայական դաշտում: Պետականորեն այսպիսի անփույթ եւ անտարբեր վերաբերմունքի առկայությամբ, ի պատիվ մեր հրատարակիչների, պիտի վկայել, որ գրահրատարակչական գործը ոչ միայն չի նահանջել, այլեւ զարգացում է ապրել, ստեղծվել է արժեքավոր գրականություն, ձեւավորվել է պոլիգրաֆիական կուլտուրա՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան: Դեռ ավելին հրատարակչություններ կան, որ անգամ ամենասուղ պայմաններում իրականացնում են որոշակի մշակութային քաղաքականություն դավանելով գաղափարական կայուն սկզբունքների (այս առումով առանձնակի գնահատելի է «Սարգիս Խաչենց» հրատարակչության կատարած աշխատանքը. հայ մտավոր իրականություն ներբերել համաշխարհային, հատկապես արեւմտաեվրոպական հոգեւոր-մշակութային մտքի լավագույն նմուշները):

Այս բավականին շահագրգիռ քննարկման ընթացքում եղան բազմաթիվ առաջարկներ: Հր. Թամրազյանի դիտողությունները վերաբերում էին գրքի տարածմանը. իրացումը կազմակերպելուն, գրախանութներին, գրադարաններին: Առաջարկվեցին փոփոխություններ կատարել ավելացված արժեքի հարկի մասին օրենքի մեջ, շահութահարկի, մաքսատուրքերի հետ կապված, ստեղծել կից օրենք պետական աջակցության մասին, հարկային արտոնություններ սահմանել նվիրատվությունների պարագայում, խրախուսել մեկենասությունը: Հատկապես քննադատվեց օրենքի 15-րդ հոդվածը, որ սահմանափակում է գրահրատարակչի գործունեությունը լիազոր մարմնի գոյությամբ: Այս մարմինը դիտվեց իբրեւ գրահրատարակչության գործունեության վրա արգելքներ դնող եւ ազատությունը սահմանափակող վտանգավոր միտում եւ որպես հրատարակչի իրավունքները ոտնահարող ավելորդ գրաքննություն, հատկապես երբ օրենքի նախագծում արդեն կանոնակարգված են գրահրատարակչական գործունեության նորմերը (հոդված 6): Արգելվում է իրենպես պատժելի արարքներ քարոզող, պոռնկագրությանը, թմրամոլությանը, դաժանությանը նպաստող գրականություն հրատարակելը, մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, հրատարակելը եւ այլն: Այս հարցերի մասին իրենց կարծիքներն արտահայտեցին Վահագն Սարգսյանը, Սերգեյ Խաչիկոզյանը, Հովհաննես Այվազյանը, Արմեն Դավթյանը, Դավիթ Սուրադյանը:

Հեղինակային իրավունքի մասին օրենքի վերաբերյալ տեսակետներ հայտնեց «Հայ հեղինակ» հասարակական կազմակերպության փոխտնօրեն Սուսաննա Ներսիսյանը, որ արեւմտաեվրոպական չափանիշները, նորմերը փորձեց տեղայնացնել, գտնելով, որ արդեն ձեւավորված եւ լավագույնս արդյունավետ գործող չափանիշները կարելի է կիրառել նաեւ այստեղ:

Առաջիկայում նախատեսվում է սույն նախագծի մի քանի այլ տարբերակներ եւս, որոնց շուրջ դեռեւս կլինեն քննարկումներ, մինչեւ վերջնական եւ կատարյալ օրինակը: Գրահրատարակիչները գտան, որ իրենք համագործակցության եւ միավորման անհրաժեշտություն ունեն (ինչպես լրագրողական աշխարհում է՝), ինչպես նաեւ հեղինակային իրավունքի, գրքի սպառման, առեւտրի կազմակերպման բազմաոիպ խնդիրներ կան:

Պետական աջակցությունից զուրկ, իրավական դաշտի բացակայությամբ, փաստորեն, տարեցտարեն իրականացվող գրահրատարակչական գործունեությունը եւ դրա արդյունքը, ըստ էության, շնորհիվ նվիրյալ այս մարդկանց անմնացորդ ջանքերի է, որ ասես հավատարմության երդում է գրքին, գրականությանը, տպագիր խոսքին:

Այս առումով անդրադարձ կատարելով քննարկվող հարցերին ՀՊՄ քարտուղար Դավիթ Սուրադյանը նկատեց, որ մտավոր այնպիսի կողոպուտ, ինչպես Հայաստանում է կատարվում, որեւէ տեղ թերեւս չկա: Այս օրենքի գաղափարախոսությունը Հայաստանում հումանիտար դաշտը պահպանելու եւ ընդլայնելու գերխնդիրը պետք է առպահովի: «Մենք փոքր երկիր ենք եւ զտնվում ենք անկյունադարձային փուլում, հումանիտար դաշտը պետական աջակցության կարիք է զգում, եւ, ամեն ինչ թողնելով շուկայական հարաբերությունների կարգավորմանը, կարող ենք կորցնել անկյունաքարային արժեքներ»:

Նիստը եզրափակող խոսքը ՀՊՄ նախագահ Լեւոն Անանյանինն էր. ըստ նրա, օրենքի ընդունումը հասունացած խնդիր է, իսկ օրենքը կատարյալ տեսնելու համար անհրաժեշտ է շահագրգիռ մոտեցում, եւ գրավոր առաջարկները պետք է լինեն հաշվի առնելով մինչ այժմ կատարված բոլոր իրողությունները, ինչպես նաեւ մեր դաշտը եւ ռեալ հնարավորությունները. «Գերմանիայում, արեւմուտքում ամրագրված չափանիշների մասին ենք խոսում, սակայն պետք է նկատի ունենանք, թե եվրոպական փորձառությամբ անցած օրենքները որքանով կգործեն մեր երկրում, որտեղ հրատարակչի աշխատանքային դաշտը նահատակման դաշտ է, որտեղ շատ հայտնի ճշմարտություններ չեն գործում»:

Թե որքան կատարյալ կարելի է դարձնել այս օրենքը, կախված է հրատարակիչների իրենց շահերը պաշտպանելու եւ օրենքով կանոնակարգված դաշտ մտնելու ցանկություններից: Թեեւ թերահավատություն նույնպես զգացվում էր (ինչպես եւ մյուս օրենքների դեպքում): Օրենքները գրվում են ճերմակ թղթերի վրա, քննարկվում, լրամշակվում, սակայն հիմնականում մնում են շրջանցելի, որտեղ գործում են կամայականությունները եւ անհավասար մոտեցումները: Իսկ առհասարակ գրահրատարակչական ոլորտին պետական աջակցությունն անհրաժեշտ է, որովհետեւ գիրքն իբրեւ մշակույթ չի կարող երբեք սպառված համարվել:

ՄԵԼՈՆ ԲԱԴԱԼՅԱՆ

Փառատո՞ն, թե՞... խայտառակություն

Երեւանում ավարտվեց, ոչ բարով-խերով, բրիտանական ֆիլմերի երկրորդ փառատոնը: Ճիշտն ասած՝ նախանձում եմ այն մարդկանց, ովքեր հնարավորություն չունեցան ներկա գտնվելու առնվազն մեկ ֆիլմի ցուցադրմանը: Նախանձում եմ, որովհետեւ... ներկայացված 9 ֆիլմերի կեսից ավելին, մեղմ ասած, դիտելու արժանի ֆիլմեր չէին: «Իրականությունից վերացած», «Վերջին կամքը», «Սաուք վեսքնայն», «Մեծ ավար» եւ վերջապես՝ «գլուխգործոց» համարվող «Սեխուալ կենդանի» ֆիլմերը չափազանց հեռու էին բարոյական, գեղագիտական կամ դաստիարակչական բավականություն պատճառելուց: Իսկ դրանց լեզուն ուղղակի սարսափելի էր:

Մենք չափազանց բարձր կարծիք ունենք բրիտանական ֆիլմերի մասին առհասարակ եւ հիշում ենք ժամանակին ստեղծված բարձրարժեք գործեր: Սակայն այս ֆիլմերը, որոնք, ինչպես նախօրոք հայտարարված էր, վերջին 2-3 տարվա ընթացքում երիտասարդ ռեժիսորների գործեր էին, ընդհանրապես զուրկ էին ամեն մի դրական տարրից եւ չպետք է ներկայացվեին փառատոնի անվան տակ: Չէ՞ որ փառատոնը կազմակերպված էր բրիտանական խորհրդի կողմից, որի գործունեությունն ուղղված է «երկրների միջեւ կրթական եւ մշակութային հարաբերությունների զարգացմանը... եւ էլ ավելի բարձրացնելու Միացյալ թագավորության հեղինակությունը՝ որպես հուսալի գործընկեր տարբեր երկրների սոցիալական, տնտեսական եւ քաղաքական բնագավառներում»: Ինչպե՞ս: Ա՞յս ձեւով: Շատ շնորհակալություն:

Իսկ լեզվի մասնագետների եւ ուսումնասիրող ուսանողների համար զայրացուցիչ էր լսել ֆիլմերի անգլերեն տարբերակների հայհոյանքներով հագեցած խոսակցությունները: Այնպիսի տպավորություն էր, կարծես դիտավորյալ էին ընտրված նման ֆիլմերը՝ խաբարելու ճաշակն ու նկարագիրը մեր նոր սերնդի, որոնք ծրի լինելու հանգամանքից օգտվելով՝ խուռներամ փութացել էին կինոդահլիճ:

Գուցե չանդրադառնայինք այդ ֆիլմերին, եթե չլիներ այն հանգամանքը, որ, ինչպես բացումից առաջ խոստացան կազմակերպության ներկայացուցիչները, փառատոնը դառնալու է ավանդական: Հույս ունենք, որ առաջիկայում բրիտանական խորհուրդն ավելի բծախնդիր մոտեցում կցուցաբերի ֆիլմերի ընտրության հարցում: Այլապես ներկա դրությամբ այդ ֆիլմերը, մեր կարծիքով, առավելապես խայտառակում են այդ հեղինակավոր կազմակերպությանը, քան նպաստում նրա վարկի բարձրացմանը: Դրանք չեն նպաստում նաեւ բրիտանական ֆիլմերի ներկա վիճակի մասին ամբողջական եւ դրական կարծիք ձեւավորելուն:

Հ. Ծ.

Հոբելյան՝ նաեւ հոգսերով

Նոյեմբերի 29-ին Լ. Արիսյանի անվան թիվ 127 միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմը տոնեց դպրոցի հիմնադրման 40 ամյակը: Իր պատմության 40 տարիների ընթացքում դպրոցը 3319 շրջանավարտ է ունեցել, որոնցից շատերը մասնակցում էին հանդիսությանը: Դպրոցում բացվեց պատմության թանգարան, որտեղ «Մեր շրջանավարտները» խորագրի տակ դպրոցի աշխատակազմը հավաքել եւ ձեւավորել է դպրոցի անցած ուղին, արտացոլելով այն հայտնի շրջանավարտների՝ գիտնականների, ռազմիկների, արվեստի բնագավառի, քաղաքական եւ հասարակական գործիչների լուսանկարների միջոցով:

Չնայած իր 40-ամյա պատմությանը, դպրոցը այսօր կանգնած է լուրջ խնդիրների առաջ: Ինչպես ասաց դպրոցի ուսուցչուհիներից մեկը. «Մենք շատ բան չենք ուզում: Թող նույնիսկ մեր աշխատավարձերը չբարձրացնեն, բայց թող պետությունը հիշի, որ ունի կրթական համակարգ, որին այսօր ոչնչով չի օժանդակում: Եթե դպրոցների հանդեպ պետական մոտեցում ցուցաբերվի, շատ բան կփոխվի, մենք ուսուցիչներս, գոհ կլինենք: Իսկ հիմա... Ամեն անգամ, երբ ես պիտի մտնեմ դասասենյակ եւ հայտարարեմ, որ դպրոցի բարեկարգման աշխատանքների համար պահանջվում է 1000 դրամ, ինձ թվում է, թե ես եկել եմ ողորմություն խնդրելու: Եվ երբեք չես կարող վստահ լինել, թե ինչպես երեխաները կփոխանցեն քո խոսքերը իրենց ծնողներին... Ուսուցիչներն ու աշակերտները դարձել են դպրոցի միակ ֆինանսական աղբյուրը...»:

Հոբելյանի առթիվ դպրոցի ուսուցչական անձնակազմի, ծնողական համայնքի, Քանաքեռ-Զեյթուն թաղամասի կողմից գումարներ էին հատկացվել դպրոցի վերանորոգման համար: Հատկանշական է այն փաստը, որ դպրոցի վերանորոգման աշխատանքների անցկացմանը նյութապես սատարել են դպրոցի նախկին շրջանավարտները՝ Մելս Հակոբյանը, ֆուտբոլիստ Սուրեն Բարսեղյանը: ԱՄՆ-ից հատուկ ժամանած շրջանավարտ Ավետիս Իսկանյանը դպրոցի պատմության թանգարանի կահավորման հոգսերը վերցրել էր իր վրա եւ խոստացել կահավորել համակարգչային դասարան:

Իսկ Քանաքեռ-Զեյթուն ավագանու խորհրդի որոշման համաձայն թաղամասի Ռուբեն Սինոյանը հոբելյանի առթիվ պատվոգրեր եւ հուշանվերներ հանձնեց դպրոցի հիմնադրման պահից այնտեղ աշխատող ուսուցիչներին:

ՆԱՍՊ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Հայտարարություն

ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը եւ ՀՀ Գրողների միությունը հրավիրում են մասնակցելու
գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր
Սերգեյ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ
65-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթին,
որը տեղի կունենա ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի 2-րդ հարկում գտնվող Չարենցի անվան լսարանում, ս. թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 16:00-ին:

Մարզական

Վերջին տարիներին Հայաստանի մանկադպրոցական ֆուտբոլում դրական տեղաշարժեր են նկատվում: Խոսքն առաջին հերթին «Փյունիկի», «Արմավիրի», ֆուտբոլի հանրապետական մարզադպրոցների, ակումբներին կից ստեղծվող մանկադպրոցական խմբերի մասին է: Հայաստանում մանկադպրոցական ֆուտբոլի զարգացմանն ուղղված ծրագիր է մշակել «Արարատ» ֆուտբոլային ակումբն՝ իր հովանավորների աջակցությամբ: Շվեյցարական ժամացույցների հանրահայտ «Ֆրանկ Մյուլլեր» firmայի փայատեր, շվեյցարահայ Վարդան Սրմաքեշը, որը նաեւ «Արարատի» բաժնետերերից է, Հայաստանում լուրջ ներդրումներ է կատարել ժամագործության եւ ոսկերչության բնագավառում, որոշել է ընդլայնել նաեւ իր ֆուտբոլային գործունեությունը: Նրա նախաձեռնությամբ Չորաքյուրի մարզաբազայում հիմնվելու է ֆուտբոլի դպրոց, որը հանդիսանալու է յուրօրինակ ֆուտբոլային համալսարան 15 եւ բարձր տարիքի առավել շնորհալի դպրոցականների համար: Ուրախալի է, որ վերջապես լուծվել է Չորաքյուրի մարզաբազայի հարցը: Ժամանակին այն կառուցվել էր «Արարատի» համար, որտեղ թիմն անցկացնում էր իր ուսումնամարզական հավաքները: Մարզաբազան 50 տարով վարձակալության է տրվել «Արարատ» ակումբին: Ներկայումս ընթանում են նախագծային-հաշվարկային աշխատանքները 30 հա տարածք ունեցող մարզաբազան վերանորոգելու, ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար: Անհրաժեշտ ծախսերը հոգալու են Վարդան Սրմաքեշն ու «Արարատի» բաժնետերերի խորհրդի նախագահ, ամերիկահայ Հրաչ Գաբրիելյանը: Կկառուցվեն 2000 նստատեղով փոքր մարզադաշտը, «Արարատի» պարապմունքների եւ դպրոցի պատանիների մարզումների համար նախատեսված խաղադաշտեր: Հիմնովին կվերանորոգվի հյուրանոցային մասնաշենքը, մարզադահլիճը, կստեղծվեն ֆուտբոլիստների մարզումների եւ վերականգնման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Մարզաբազայից կարող են օգտվել նաեւ այլ մարզաձեւերի ներկայացուցիչները՝ անցկացնելով իրենց ուսումնամարզական հավաքներն ու պարապմունքները: Այս մասին պայմանավորվածություն է ձեռք բերվել «Արարատ» ակումբի եւ ՀՀ սպորտվարչության ղեկավարության միջեւ:

Նոր ստեղծվող դպրոցի պատասխանատուն իտալացի Ֆրանկո Ռոնդանինին է, որը ՖԻՖԱ-ի գործակալ Միգելե Պալմիսանոյի հետ ժամանել էր Երեւան: Նրանք այցելել են մարզադպրոցներ, ծանոթացել պայմաններին, դիտել մարզումները եւ բավական լավ կարծիք ունեն պատանիների հետ աշխատող մարզիչների մասին: Հենց տեղի կադրերից էլ կընտրվեն ֆուտբոլային համալսարանի մարզիչները, սպասարկող անձնակազմը: Ինչ վերաբերում է սաների ընտրությանը, ապա հատուկ տեստերի միջոցով կընտրվեն առավել տաղանդավոր ֆուտբոլիստները: Ֆուտբոլային գիտելիքներից զատ, նրանք կստանան նաեւ հանրակրթական ուսուցում: Խաղացողները կընտրվեն ողջ հանրապետությունից, բոլոր մարզադպրոցներից ու ակումբներից: Նրանց հետ իրավական հարաբերությունները կկարգավորվեն համապատասխան պայմանագրերով: Կան մի շարք տարբերակներ: Հնարավոր է, որ մարզադպրոցը հրաժարվի խաղացողի հանդեպ ունեցած իր իրավունքներից եւ նրան տրամադրի ֆուտբոլային համալսարանին: Կամ ակումբը վարձակալությամբ տրամադրի իր ֆուտբոլիստին՝ պահպանելով իր իրավունքները հետագայում տրանսֆերային գործարքների դեպքում: Եթե ակումբը ցանկանա, որ իր սանը մարզվի այդ դպրոցում, ապա բնական է, որ ծախսերն ակումբն է հոգալու: Այնպես որ, իրավաբանորեն պայմանագրերի ճիշտ կնքման դեպքում վիճելի հարցեր չպետք է ծագեն:

Որոշակի ֆուտբոլային գիտելիքներ ձեռք բերելուց հետո դպրոցի սաներն իրենց վարպետությունը կկատարելագործեն Իտալիայում, Իսպանիայում եւ Շվեյցարիայում գործող համանման դպրոցներում: Նույնը վերաբերում է նաեւ մարզչական կազմին: Երեւանում գտնվելիս իտալացի մասնագետների առջեւ խնդիր էր դրվել նաեւ ծանոթանալ «Արարատի» ֆուտբոլիստների խաղային հնարավորություններին՝ նրանց արտասահմանյան ակումբներ գործուղելու հեռանկարով: Նրանք նաեւ պետք է զբաղվեն «Արարատի» համար լեգեոներներ ընտրելու հարցով:

Մեզ մնում է հաջողություն մաղթել «Արարատ» ակումբի ղեկավարության ու հովանավորների գովելի նախաձեռնությանը եւ սպասել արդյունքներին:

Չորաքյուրում կհիմնվի ֆուտբոլային համալսարան

Վարդան Սրմաքեշն ընդլայնում է ֆուտբոլային գործունեությունը

«Սպարտակը» կարող է հնչին գումար ստանալ

ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների իրավական կարգավիճակի կոմիտեի նախագահ Ջանպաոլո Մոնտենեգրոն Սիչովի գործի կապակցությամբ նշել է, որ, ըստ գործող կարգի, 4 ամսվա որակազրկման ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստին ազատ խաղացողի կարգավիճակ է շնորհվում եւ ցանկացած ակումբ կարող է նրա հետ պայմանագիր կնքել: Ինչ վերաբերում է փոխհատուցմանը, ապա դարձյալ գործող կարգի համաձայն, այդ դեպքում «Սպարտակն» իրավունք ունի պահանջելու միայն ֆուտբոլիստի պատրաստման համար կատարած ծախսերը, ինչը, բնականաբար 6 մլն դոլարից բավական փոքր գումար կկազմի: Բացի այդ էլ, այդ գումարը պետք է բաժանվի այն ակումբների միջեւ, որոնցում խաղացել է Սիչովը մինչ «Սպարտակ» տեղափոխվելը (օրինակ, Տամբովի «Սպարտակի»): Այնպես որ, «Սպարտակը» կարող է շատ չնչին գումար ստանալ:

Հովանավորներ չգտնվեցին

Իրանի եւ Բրազիլիայի հավաքականների միջեւ դեկտեմբերի 17-ին նախատեսված ընկերական հանդիպումը չի կայանա: Պատճառն այն է, որ Իրանի ֆուտբոլի ֆեդերացիային չհաջողվեց խաղի անցկացման համար անհրաժեշտ 500 հազար դոլարի ծախսը հոգալու համար հովանավորներ գտնել: Ընկերական հանդիպում անցկացնելու առաջարկն արվել էր Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից, որի հավաքականը մրցաշրջանավարտ է մեկնի Ասիա: Իրանի հավաքականը մրցակից էր ընտրվել հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիմն Ասիայի չեմպիոնն է:

Սակայն Իրանի ֆեդերացիան մտադիր է խաղը տեղափոխել հաջորդ տարի եւ անցկացնել Թեհրանում, պայմանով, որ բրազիլացիների կազմում հանդես գան բոլոր «աստղերը», ինչպես դա եղավ վերջերս հարավկորեացիների հետ հանդիպման ժամանակ: Դեկտեմբերի 17-ին նշանակված խաղը նախատեսված էր անցկացնել Սպահանի ոչ մեծ մարզադաշտում, քանի որ Թեհրանի 110 հազարանոց «Ազադի» մարզադաշտը վերանորոգման մեջ է: Ահա թե ինչու հանդիպման հովանավորներ չգտնվեցին: Բացի այդ, Բրազիլիայի հավաքականի ղեկավարությունը խաղի անցկացման համար պահանջել էր մոտ 350 հազար դոլար: Այնպես որ, եթե խաղը կայանա Թեհրանում, գուցե եւ հովանավորներ գտնվեն:

ՖՈՒՏԲՈԼ

2010 թ. աշխարհի առաջնությունն Աֆրիկայում

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատտերը հայտարարել է, որ ֆուտբոլի աշխարհի 2010 թ. առաջնությունն անցկացվելու է աֆրիկյան մայրցամաքում: Այնպես որ, մինչեւ այս տարվա վերջն առաջնությունն իրենց մոտ անցկացնել ցանկացող աֆրիկյան պետությունները պետք է պաշտոնապես հայտ ներկայացնեն: Հետագա տարիների համար, ՖԻՖԱ-ի նախագահի կարծիքով, պետք է գործի աշխարհամասերի հերթականության սկզբունքը: Այդ հարցը պետք է քննարկվի դեկտեմբերի 17-18-ը Մադրիդում կայանալիք ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում: Այդ ժամանակ հայտնի կդառնա նաեւ յուրաքանչյուր ֆուտբոլային կոնֆեդերացիային հատկացվող ուղեգրերի քանակն աշխարհի առաջիկա առաջնության ընտրական մրցաշրջանում:

ՍԱՄԲՈ

Արթուր Գեւորգյանն աշխարհի փոխչեմպիոն

Պանամայում ավարտված սամբո ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանը ներկայացնող երեք մարզիկներից առավել հաջող հանդես եկավ Արթուր Գեւորգյանը: Մեծահասակների մրցաշարում, 57 կգ քաշային կարգում վանաձորցի սամբիստը գրավեց 2-րդ տեղը: Աշխարհի առաջնության արծաթե մեդալակրի հաջողությունը կիսում է նրա մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Լեւոն Հայրապետյանը:

Յուժնին Ռուսաստանին հաղթանակ է պարգեւում

Փարիզի «Բերսի» սպորտի պալատում 3 օր շարունակ Դեւիսի գավաթն էին վիճարկում Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հավաքականները: Համառ ու դրամատիկ պայքարում հաջողությունն ուղեկցեց ռուս թենիսիստներին, որոնք առաջին անգամ դարձան Դեւիսի գավաթակիր: «Արծաթյա սկուտեղի» խաղարկման ավելի քան 100-ամյա պատմության ընթացքում Ռուսաստանի հավաքականը մրցանակին արժանացած 11-րդ թիմն է:

Հանդիպումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել թենիսի սիրահարների շրջանում: Հանդիպմանը ներկա գտնվելու համար կնոջ հետ Փարիզ էր ժամանել նաեւ թենիսի մեծ սիրահար, ՌԴ առաջին նախագահ Բորիս Ելցինը, որն ավարտական հանդիպումից անմիջապես հետո կորս դուրս եկավ եւ առաջինը շնորհավորեց թենիսիստներին աննախադեպ հաջողության առթիվ: Թենիսիստներին շնորհավորել է նաեւ ՌԴ ներկայիս նախագահ Վլադիմիր Պուտինը, նշելով, որ դա ողջ ռուսական սպորտի վառ ու մեծ հաղթանակն է: Նա իր շնորհակալությունն է հայտնել բոլոր թենիսիստներին, որոնցից յուրաքանչյուրն իր ներդրումն ունեցավ հիանալի արդյունքի հասնելու գործում:

Ռուս թենիսիստներն, իսկապես, մարզական սխրանք գործեցին: Մրցախաղը սկսվեց Մարատ Սաֆինի եւ Փոլ-Անրի Մաթյեի հանդիպումով: Առաջին խաղափուլում Սաֆինը հաղթեց 6-4 հաշվով, բայց 2-րդում շատ սխալներ թույլ տվեց եւ զիջեց մրցակցին (3-6): Սակայն հաջորդ երկու խաղափուլերում Սաֆինն արդեն իր տարերքի մեջ էր (6-1, 6-4): Երկրորդը կորս դուրս եկած եվգենի Կաֆելնիկովին չհաջողվեց զարգացնել հաջողությունը: Նա պարտվեց Սեբաստիան Գրոժանից (6-7, 3-6, 0-6): Իսկ երբ Սանտորո-Էսկյուդե ֆրանսիական զույգը հաղթեց Սաֆին-Կաֆելնիկով երկյակին (6-3, 3-6, 5-7, 6-3, 6-4), ռուսների վիճակը ծանրացավ: Հաղթանակի համար անհրաժեշտ էր շահել մնացած 2 խաղերը: Հավաքականի ավագ Տարտիշելը որոշեց Կաֆելնիկովի փոխարեն կորս դուրս բերել Միխայիլ Յուժնուն, որը վերջին հանդիպումում պետք է մրցեր Փոլ-Անրի Մաթյեի հետ: Իսկ մինչ այդ Սաֆինը կարողացավ հավասարեցնել հաշիվը՝ պարտության մատնելով Գրոժանին (6-3, 6-2, 7-6): Ամեն ինչ պետք է վճռեր վերջին հանդիպումը: Առաջին երկու խաղափուլերն անհաջող էին Յուժնու համար (3-6, 2-6): Թվում էր, թե մրցախաղի ելքն արդեն վճռված է: Սակայն Յուժնին իր մեջ ուժ գտավ բեկում մտցնելու մրցակցությունում եւ գերազանց անցկացնելով հաջորդ երեք խաղափուլերը (6-3, 7-5, 6-4) իր թիմին հաղթանակ պարգեւեց՝ հայտնվելով թիմակիցների գրկում:

Ռազմիկ Ավագյանը նարդու ՀՀ չեմպիոն

Նարդու ազգային ֆեդերացիայի ակումբում անցկացվեց մարզաձեւի ՀՀ 11-րդ առաջնությունը երկար խաղաձեւից: Չեմպիոնի կոչման համար մրցավեճի էին բռնվել 24 նարդիստներ, որոնք օլիմպիական մրցակարգով որոշեցին առաջնության մրցանակակիրներին: Համառ ու անգիջում մրցապայքարում անցած առաջնության հաղթող դարձավ մեր գործընկեր, **«Ազգի»** մարզական բաժնի նախկին պատասխանատու, «Նոյյան տապանի» մարզական լրագրող Ռազմիկ Ավագյանը, որը եզրափակիչում պարտության մատնեց Սիրաժ Դամբարյանին: Մրցանակային 3-րդ տեղը գրավեց Արթուր Մուրադյանը: Նշենք, որ Ռազմիկ Ավագյանն անցյալ տարի նվաճել էր նարդու Հայաստանի գավաթը:

Ուղեգրերը գտան տերերին

Ճապոնիայում ավարտվեց գեղասահքի Գրան պրիի վերջին՝ 6-րդ փուլը, որի արդյունքներով որոշվեցին հաջորդ տարվա գարնանը Սանկտ Պետերբուրգում կայանալիք եզրափակիչ փուլի մասնակիցները: Հաջող հանդես եկան Ռուսաստանի ներկայացուցիչները: Կանանց մենասահքում ուղեգիր նվաճեց աշխարհի չեմպիոնուհի Իրինա Սլուցկայան՝ գրավելով 2-րդ տեղը: Կարճ ծրագրից հետո նա զիջում էր ճապոնացի երեք մարզուհիների, իսկ կամավոր ծրագրից հետո իրենից առաջ թողեց միայն Յոսի Օնդային: Տղամարդկանց մենասահքում հաղթող ճանաչվեց Իլյա Կլիմկինը, որը եւս իրավունք ստացավ հանդես գալու Սանկտ Պետերբուրգում: Կամավոր ծրագրի կատարումից հետո նա կարողացավ գերազանցել մինչ այդ առաջատարի դերը ստանձնած ճապոնացի Տակեշի Խոնդային: Իրենց մրցակիցներին գերազանցեցին նաեւ Իրինա Լոբաչովան ու Իլյա Ավերբուխը՝ վստահորեն գրավելով առաջին տեղը:

«Դեպորտիվոն» դարպասապահ է փնտրում

Բացառված չէ, որ ֆուտբոլի Գերմանիայի հավաքականի նախկին դարպասապահ Բոդո Իլգները վերադառնա Իսպանիա, որտեղ նա մի քանի տարի առաջ պաշտպանում էր Մադրիդի «Ռեալի» դարպասը: Նրանով հետաքրքրվում է «Դեպորտիվոն», որը չեմպիոնի կոչման գլխավոր հավակնորդներից է: 35-ամյա աշխարհի չեմպիոնը 2001 թ., երբ հեռացավ «Ռեալից», այլեւս ոչ մի թիմում հանդես չի գալիս: Ուստի որոշ չափով զարմանալի է իսպանական ակումբի հետաքրքրությունը Իլգների նկատմամբ: Թիմի դարպասապահ Ֆրանցիսկո Մոլինայի մոտ չարտրակ ուռուցք հայտնաբերելուց հետո «Դեպորտիվոն» մնացել է առանց հիմնական դարպասապահի: Ակումբի ղեկավարությունն առաջարկել էր ֆրանսիական «Նիցայի» դարպասապահ Դամիան Գրեգորինիին ծմռանը տեղափոխվել «Դեպորտիվո», սակայն վերջինս չէր համաձայնել: Ֆրանսիայի առաջնության ամենահուսալի դարպասապահը, որը 16 խաղում բաց է թողել ընդամենը 7 գնդակ, նշել է, որ մրցաշրջանի ընթացքում հարազատ ակումբից հեռանալը գեղեցիկ չէ, թեկուզեւ Լա Կորուն այսում իրեն ավելի բարձր աշխատավարձ էին առաջարկում ու հանդես էր գալու չեմպիոնների լիգայում:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Մենք նվիրում ենք Ձեզ 2.5%

Նոր փարվա կապակցությամբ Յունիբանկը անակնկալ է պատրաստում իր հաճախորդների համար: Այժմ դեկտեմբերի 1-ից մինչեվ հունվարի 1-ը Դուք կարող եք շահավետ կերպով ներդնել Ձեր միջոցները 6 ամիս ժամկետով եվ առացվա փարեկան 9% ամսական կամ 9.5%-ի փոխարեն ժամկետի վերջում ստանալ 11.5% կամ 12% համապատասխանաբար:

Դրամական փոխանցումներ
Ռուսաստանից Հայաստան
Հայաստանից Ռուսաստան,
ինչպես նաեւ Ուկրաինա, Մոլդովա և Վրաստան

«Յունիստրիմը» դրամական փոխանցումների համակարգ է, որը հնարավորություն է տալիս ֆիզիկական անձանց փոխանցել գումարը՝ առանց բանկային հաշվի բացման:

ՀՈՒՍԱԼԻ, ՇՏԱՊ, ԷԺԱՆ

2 ժամվա ընթացքում Ձեր հարազատներն ու մերձավորները կարող են ստանալ դրամական փոխանցումը Հայաստանում, Ռուսաստանում կամ Լեռնային Ղարաբաղում ընդամենը 1 % միջնորդավճարով:
«Յունիբանկն» այսօր ձեզ համար բացել է անմիջական ֆինանսական պատուհան դեպի Ուկրաինա, Վրաստան և Մոլդովա:
Դուք կարող եք ձեր դրամը փոխանցել եւ ստանալ.

«Ուկրսիբբանկի» միջոցով (Ուկրաինա)՝
վճարելով փոխանցման գումարի ընդամենը 2 տոկոսը

«Կովկասիոնի» բանկի միջոցով (Վրաստան)՝
վճարելով փոխանցման գումարի ընդամենը 2 տոկոսը

«Բիզնես բանկի» միջոցով (Մոլդովա)՝
վճարելով փոխանցման գումարի ընդամենը 1.75 տոկոսը

UTRADERU
www.utrade.ru

Այսօր Հայաստանում լինելով հնարավորություն ունենք Ռուսաստանի ֆինանսական շուկաներում գործարքներ կնքել UTRADE համակարգի միջոցով

Յունիբանկը Յունիաստրում բանկի Ռուսական ֆոնդային կենտրոնի հետ համատեղ 2003թ. հունվարի 15-ից 25-ը հրավիրում է Ձեզ մասնակցելու ռուսական արժեթղթերի շուկայի և Հայաստանում արժեթղթերի առևտրի հեռանկարային իրականացմանը նվիրված սեմինարին: Սեմինարի շրջանակներում կկազմակերպվի մրցույթ, որի հաղթողներին կտրվի հնարավորություն անվճար իրականացնել գործարքներ արժեթղթերի ռուսական շուկայում՝ օգտվելով UTRADE համակարգից:

Դիմումները ընդունվում են մինչև դեկտեմբերի 25-ը հետևյալ հասցեով
Յունիբանկ, Աբովյան 28,
հեռ. 54 24 30, 54 24 31
e-mail: potikyan@unibank.am

UNIBANK

ՅՈՒՆԻՍՏՐԻՄ ԲԱՆԿ
Ռուսաստանում դրամական փոխանցումների վճարումն իրականացնում է «Յունիստրիմ բանկը»
«Յունիստրիմ բանկի» ներկայացուցիչների հասցեները Մոսկվայում.
- մ. «Լենինգրադսկայա». Սուսլովի խ. 1. հեռ. (095) 785-10-85
- մ. «Կիևսկայա». Վարենկա 14. հեռ. (095) 787-11-73
- մ. «Պուշկին Սիրա». Խաչատուրյան պող. 33. 1/6 մասնաշենք. գրասենյակային առեւտրային կենտրոն «Օլիմպիկ պլազա». 7-րդ հարկ. հեռ./ֆաքս (095) 797-5803, 797-5886
- մ. «Պերովոսկայա». 9-րդ Պարկովայա 37/2. հեռ. (095) 165-18-74
- մ. «Սոկոլնիկի». Սոկոլնիկիի փող. 52/5. հեռ. (095) 268-00-25
- մ. «Տեխնոպոլիս». Լոմոնոսովյան պողոտա 4386. տան 1. կառույց 1. հեռ. (095) 349-94-10
- մ. «Սոկոլ». «Սոկոլնիկայա». Փոկրովսկայի խճուղի 2. կառույց 1. հեռ. (095) 785-53-85

Իրական բանկ Իրական ներդրումներ

Իրական բանկ Իրական ներդրումներ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ
ԲԱՑ ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՎԵՐ

ԵՐԵՎԱՆ

Հյուսիսային ոռոոտայի օսարման գոտու Աբովյան փողոցին հարող եւ «Ավիատրանս» հյուրանոցի եւ «Միլանո» խանութի միջեւ ընկած հատվածում 1700 ք.մ. մակերեսով թիվ տասներորդ հողամասի կառուցապատման նպատակով վարձակալին որոշելու համար Երեւանի քաղաքապետարանը 2002 թ. նոյեմբերի 19-ին «ԱԶԳ» թերթում պաշտոնական ծանուցմամբ հայտարարել է բաց աճուրդ, որն անց է կացվելու 2002 թ. դեկտեմբերի 20-ին, ժ. 18:00-ին, Երեւանի քաղաքապետարանի նիստերի դահլիճում:

Աճուրդի առարկան՝ շենքերից եւ շինություններից ազատված եւ որեւէ իրավունքով չծանրաբեռնված հողամասի վարձակալության պայմանագրի կնքման իրավունքը: Կառուցապատման ավարտից հետո նախատեսվում է կադաստրային արժեքով հողամասն ի սեփականություն ձեռք բերելու հնարավորություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ, ք. Երեւան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն, IV հարկ, հեռ. 559501, 559502, բջջ. 400749, 403301, էլ-փոստ՝ auction@legal.am

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ
ԲԱՑ ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՎԵՐ

ԵՐԵՎԱՆ

Հյուսիսային պողոտայի օսարման գոտու Պուշկինի փողոցին եւ Հյուսիսային պողոտային հարող հատվածում 750 քմ մակերեսով թիվ տասնմեկերորդ հողամասի կառուցապատման նպատակով վարձակալին որոշելու համար Երեւանի քաղաքապետարանը 2002 թ. նոյեմբերի 27-ին «Հայաստանի Հանրապետություն» թերթում պաշտոնական ծանուցմամբ հայտարարել է բաց աճուրդ, որը անց է կացվելու 2002 թ. դեկտեմբերի 27-ին, ժ. 18:00-ին, Երեւանի քաղաքապետարանի նիստերի դահլիճում:

Աճուրդի առարկան՝ շենքերից եւ շինություններից ազատված եւ որեւէ իրավունքով չծանրաբեռնված հողամասի վարձակալության պայմանագրի կնքման իրավունքը: Կառուցապատման ավարտից հետո նախատեսվում է կադաստրային արժեքով հողամասն ի սեփականություն ձեռք բերելու հնարավորություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ, ք. Երեւան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն, IV հարկ, հեռ. 559501, 559502, բջջ. 400749, 403301, էլ-փոստ՝ auction@legal.am:

Հայտարարություն

ARMENTEL

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ՝ կազմակերպությունում կուտակված սեւ եւ գունավոր մետաղների վաճառքի համար:

Մրցույթի անցկացման պայմանները եւ վաճառքի ենթակա մետաղների տեսակները շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով.

«Արմենտել» ՀՁ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ. 28.70.66:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2002 թ.-ի դեկտեմբերի 13-ը, ժամը 12:00-ն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդրվում է բոլոր կազմակերպություններին եւ քաղաքացիներին Նիկոլայ Մոիսեի Միխայլովի (ծնված 1931 թ., բնակվել է Երեւանի Գյուլբենկյան փողոցի 38ա շենքի թիվ 8 բնակարանում) վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունները հայտնել Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան կամ զանգահարել 24-01-61 հեռախոսահամարով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 2003թ.

«Ազգ»-ի սիրելի ընթերցող,

Այսուհետեւ Դուք կարող եք «Ազգ» թերթը ստանալ ամեն օր առավոտյան, Ձեր ցանկացած վայրում՝ բնակարանում, աշխատավայրում կամ գրասենյակում:

Պարզապես զանգահարեք
52 93 53,
եւ մեր գործակալը
կայցելի Ձեզ:

✆ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Վաճառվում է** NOKIA 3310 (նոր) բջջային հեռախոս: Հեռ. 587168
- **Կատարում եմ** թարգմանություններ անգլերենից հայերեն եւ հակառակը, ինչպես նաեւ ռուսերենից անգլերեն եւ հակառակը: Պարապում եմ անգլերեն ցանկացած տարիքի անձանց հետ. հեռ. 26 75 88
- **Վաճառվում է** բեռնատարակ 2500 դրամ. կահույք (նոր մոնտաժ). հեռ. 48 13 14
- **Վաճառվում է** SONY 620 մակնիշի բարձրակարգ ավտոմագնիտոֆոն. նոր, ունի հեռակառավարվող հանակարգ. 4x50 Vatt. հեռ. (091) 41 50 36
- **Փոխանակում եմ** փոքր կենտրոնում գտնվող սեփականացած 80 ՔՄ տարածքն սեփական տան հետ. հեռ. 09 423833, Արթուր
- **Վաճառվում է** իտալական «Ռ.Ֆեսա» ֆիրմայի էլեկտրական սանդուղք, 8 սեկցիայով. Հեռ. 277432
- **Վաճառվում է** 2002 թ. արտադրության «ԱԱԶ 21065» մակնիշի ավտոմեքենա. գույնը սպիտակ. վազքը 15.000 կմ. փոխանցման տուփը 5 աստիճան: Ունի SONY մակնիշի բարձրակարգ աուդիոսիստեմ, հեռակառավարվող անվտանգության հատակագիծ եւ փական. գունավոր ապակիներ, էլեկտրականացված վարագույր, նոր ալյումինե անիվներ եւ անվադողեր: Գինը 4.900 դոլար: Հեռ. (09) 423833
- **Վաճառում եմ** 3 սենյականոց բնակարան Ավան-Սոնինջ թաղամասում. 9/7 հարկ. կամիտայ վերանորոգված: Գինը 10.000 դոլար: Հեռ. 625034
- **Կատարում եմ թարգմանություններ** անգլերենից հայերեն եւ հակառակը, ինչպես նաեւ պարապում եմ անգլերեն տարբեր տարիքի մարդկանց հետ: Հեռ. 230786
- Պարապում եմ հունարեն եւ անգլերեն շաբաթական 2-3 օր. պարապմունքի տեւողությունը 1.5-2 ժամ: Հեռ. 621834, Քրիստինե
- Միջազգային ռուսական կազմակերպությունը հրավիրում է աշխատանքի 18-ից բարձր տարիքի անձանց: Հասցեն՝ Սարյան 33, բն. 1. հեռ. 421465, Գագիկ
- **Վաճառվում է** 1996 թ. նոյեմբերի արտադրության «ԳԱԶ 31029» մակնիշի վարդագույն մոխրագույն. վազքը 85.000 կմ. 5 աստիճան փոխանցման տուփով: Գինը 3000 դոլար: Հեռ. (09) 415036
- **Օգոնային էմիլյացիա** (ընդմիջ): Երեսի մաքրում ուլտրաձայնով: Հեռ. 27-75-86 (գրասենյակ), 40-55-30 բջջ.
- **Վաճառվում է** 800 քմ տուն-հողամաս Օշականում: Գինը պայմանագրային: Հեռ. 34-40-71
- **Բուժում եմ** ստամոքսի եւ աղիների խոցեր, գաստրիտ, էրոզիաներ, խոցեր, թութք, լյարդի ցիռոզ, պոլիարտրիտ, ռադիկուլիտ եւ այլ հիվանդություններ: Բժիշկ Հավլեն Միխայելյան: Հասցեն՝ Օրբելու 65ա, հեռ. 22-22-27, 28-80-30
- **Վարձով տրվում է** 1 սենյականոց բնակարան կենտրոնում («ՍԻԼ պլազայի» մոտ), 130 դոլար: Հեռ. 53-36-74
- **Կգնեմ** գրեթե ավտոմեքենաների էլեկտրաապարատների վերաբերյալ հայերեն կամ ռուսերեն: Հեռ. 263261
- **Վաճառվում է** բիլիարդի սեղան, չօգտագործված, քարե դաշտով, իր բոլոր պարագաներով (ատիքներով). չափը 3 մ x 1.5 մ: Գինը պայմանագրային: Հեռ. 289331, Վլադ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բարեգամենց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության 2. 12. 2002 Գինը 100 դրամ